ՄՇՏԱԴԻՏԱԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«ԽՈՅԵԼԻ ԽՄԲԵՐ. ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐՆ ՈՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՅՔ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ»[1]

[1] Սույն Զեկույցը հայերեն հրատարակություն է, որը պատրաստել է «Քո պաշտպանը» փաստաբանական գրասենյակը՝ «Աջակցություն դատահիրավական բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամը «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ: Զեկույցի բովանդակությունը և դրանում արտահայտված տեսակետները միմիայն «Քո պաշտպանը» գրասենյակինն են և կարող են չհամընկնել Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կամ «Հելսինկյան ասոցիացիա» և «Իրավունքի ուժ» հասարակական կազմակերպությունների տեսակետներին:

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3
Ներածություն 4
Մշտադիտարկման մեթոդաբանություն և գործիքները 6
Ողջամիտ ժամկետում գործերի քննության ապահովում 7
Covid-19-ը համավարակը՝ որպես դատաքննության ողջամիտ ժամկետի վրա ազդող գործոն 9
Բաժին 1 11
Ընտանեկան բռնության ենթարկված կանանց իրավունքների իրացումը դատարանում 11
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան 19
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան 29
Հարցումներ ԸԲ ենթարկված կանանց հետ 34
Եզրահանգում 38
Բաժին 2 40
Դատապարտյալների իրավունքների իրացումը հհ վարչական դատարանում 40
Եզրահանգում 52
Առաջարկներ 53
Ամփոփում 54

Հապավումների ցանկ

ՍԴ՝ Սահմանադրական դատարան
ՄԻԵԴ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասի » եվրոպական ն կոնվենցիա
ՄԱԿ՝ Միացյալ ազգերի կազմակերպություն
ԵԽ՝ Եվրոպական խորհուրդ
ԵՄ՝ Եվրոպական միություն
ԲԴԽ՝ Բարձրագույն դատական խորհուրդ
ՀԿ՝ հասարակական կազմակերպություն
ԸԲ՝ Ընտանեկան բռնություն
ԿՆԽՎԿ՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա»
ԱՆ՝ Արդարադատության նախարարություն
ՔԿՀ՝ Քրեակատարողական հիմնարկ
ՔԿԾ՝ Քրեակատարողական ծառայություն
ՏՀ՝ Տեղաբաշխման հանձնաժողով

Ներածություն

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ[2] հաստատվել է Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը (այսուհետ՝ Ռազմավարություն): Ի թիվս այլ ռազմավարական ուղղությունների՝ Ռազմավարության մեջ ընդգրկվել է «Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը»՝ առանձնահատուկ շեշտադրում կատարելով դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովմանը:

Ռազմավարության մեջ նշված է. «Դատարանների գործունեության արդյունավետության վերաբերյալ հետազոտությունները վեր են հանում դատական համակարգից օգտվողների անբավարարվածությունը, դատարանների ծանրաբեռնվածության պատճառով գործերի քննության չհիմնավորված երկարաձգումները, դատարանների շենքային պայմանների խնդիրներով պայմանավորված՝ արդարադատության մատչելիության ապահովման հետ կապված խնդիրները, խոցելի անձանց մասնակցությամբ գործերի քննության հատուկ հմտությունների բացակայությունը և մի շարք այլ խնդիրներ»[3]: Ռազմավարության մեջ վկայակոչված է Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի կողմից կատարված ՀՀ դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ վերլուծությունը, ըստ որի դատական համակարգից օգտվողների գնահատմամբ, 0-6 բալային սանդղակում, օրինակ, Երևանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի քննության արագության միջին բալային գնահատականը 2.5 միավոր է կազմել: Դատական պրակտիկայի վիճակագրությունը վկայում է, որ գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման, դատարաններում գործերի քննության արագության հետ կապված օբյեկտիվ խնդիրները հիմնականում դատարանների գերծանրաբեռնվածության հետևանք են: Ուստի, այս հանգամանքները հաշվի առնելով՝ Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով նախատեսված են կոնկրետ քայլեր, որոնք ուղղված են դատարանների գերծանրաբեռնվածության հիմնահարցի լուծմանը: Այս առումով մշտադիտարկումը հանրային «աչքի»՝ վերահսկողության յուրօրինակ միջոց է՝ առկա իրավիճակն ու փոփոխություններն արձանագրելու համար:

Մշտադիտարկման նպատակն ու խնդիրները

Առհասարակ արդարադատության որակի մասին շատ բան կարող է պատմել այն, թե ինչպես է այն մատուցվում հատկապես հասարակության խոցելի խմբերին: Մեր կողմից կազմված «Խոցելի խմբեր. դատապարտյալներն ու ընտանեկան բռնության ենթարկված կանայք դատարաններում» մշտադիտարկման ծրագրով նախապես ընտրվել է հասարակության երկու խոցելի խումբ՝ դատապարտյալներ և ընտանեկան բռնության (այսուհետ՝ ԸԲ)

[2] Տե՛ս հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487
[3] Տե՛ս ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշման հավելված 1-ում

ենթարկված կանայք՝ պարզելու, թե ինչպես են նրանց իրավունքներն իրացվում ներպետական դատական համակարգում: Ծրագրի շրջանակներում ընտրվել է մշտադիտարկման ենթակա գործերի աշխարհագրությունը՝ ներառելով

- **Երևան քաղաքը,**
- **Արմավիրի մարզը,**
- **Շիրակի մարզը:**

Սահմանվել է կոնկրետ ժամանակահատված՝ 2019-2021թթ.՝ պարզելու, թե Ռազմավարության ընդունումից ի վեր ինչպիսի փոփոխություններ են նկատելի հատկապես խոցելի խմբերին մատուցվող արդարադատության որակի առումով:

Մշտադիտարկման նպատակն է՝

- վեր հանել 2019-2023թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի մեկնարկից ի վեր շուրջ 2 տարվա ընթացքում հասարակության խոցելի երկու խմբերի՝ դատապարտյալների ու ԸԲ ենթարկված կանանց գործերով արդյունավետ դատական պաշտպանության, ողջամիտ ժամկետներում գործերի քննության իրավունքների իրացմանն ուղղված խոչընդոտները,
- արձանագրել խնդիրները,
- կատարել գույքագրված հիմնահարցերի լուծմանը միտված առաջարկներ,
- դրանք ներկայացնել համապատասխան շահագրգիռ կառույցներին:

Մշտադիտարկման խնդիրն է՝

- հավաքել, մշակել, վերլուծել 2019-2021թթ. ընթացքում դատապարտյալների և ԸԲ ենթարկված կանանց գործերով արդյունավետ դատական պաշտպանության և ողջամիտ ժամկետներում գործի արդար, անաչառ քննության վերաբերյալ տեղեկատվությունը, համակարգել արձանագրված խնդիրները և առաջարկներ ներկայացնել պատկան մարմիններին:

Մշտադիտարկման մեթոդաբանություն և գործիքները

Մշտադիտարկումն ընդգրկում է երկու բաժին՝

➢ԸԲ ենթարկված կանանց իրավունքների իրացումը դատարաններում,

➢Դատապարտյալների իրավունքների իրացումը դատարաններում:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է 2019-2021թթ. քննված և/կամ քննվող շուրջ 209 դատական գործ, որից

✓35-ը վարչական վարույթներ են /դատապարտյալների իրավունքների վերաբերյալ/,

✓174-ը՝ քրեական վարույթներ /ընտանեկան բռնության դեպքերով/,

✓174 քրեական վարույթներից 92-ը Երևանում քննված և/կամ քննվող գործեր են, 50-ը՝ Արմավիրում, 32-ը՝ Շիրակում:

Նախապես մշակվել է գործերի ուսումնասիրության ձևաչափ՝ ընդգրկելով «կարմիր դրոշակները», այսինքն՝ քննության ընթացքում արձանագրված այն կետերը, որոնք անհրաժեշտ են մշտադիտարկման խնդիրները վեր հանելու համար, օրինակ՝ քննության տևողությունը, դատական նիստերի հետաձգումները, դրանց պատճառները, նիստերի նշանակման պարբերականությունը և այլ:

Մշտադիտարկման ժամանակ կատարվել է՝

✓Datalex.am դատական տեղեկատվական համակարգի միջոցով կատարվել է «Վարչական դատարան» բաժնի 2019-2021թթ. ընդդեմ ՀՀ ՔԿՀ-ների կամ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության դատապարտյալների ներկայացված հայցերով ավարտված և/կամ ընթացքի մեջ գտնվող 35 գործի ուսումնասիրություն,
✓Datalex.am դատական համակարգի միջոցով ընտանեկան բռնության դեպքերով 2019-2021թթ. քննված ու դեռ ընթացքի մեջ գտնվող 174 քրեական գործի քննության ուսումնասիրություն,
✓Ընտանեկան բռնության դեպքերով 2019-2021թթ. Երևանի ընդհանուր իրավասության դատարանում և երկու մարզերում՝ Արմավիրի և Շիրակի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում կատարվել է 8 քրեական գործի քննության ընթացքի մշտադիտարկում,
✓ԸԲ ենթարկված 16 կնոջ հետ կատարվել են հարցումներ՝ նախապես մշակված հարցաթերթիկով:

Ողջամիտ ժամկետում գործերի քննության ապահովում

Մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է այնպիսի խնդիր, որը նույնական է թե՛ դատապարտյալ-ՔԿ համակարգ վեճերի, թե՛ ընտանեկան բռնության դեպքերով գործերի պարագայում: **Այն է՝ գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման խնդիրը:** Օրինակ՝ մշտադիտարկման արդյունքներով անգամ ավելի քան չորս տարի տևած քրեական գործ է առկա Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում: Թիվ ԵԴ/0901/01/18 քրեական գործի ուսումնասիրությամբ պարզվեց, որ գործի հարուցումից մինչև ընդհանուր իրավասության դատարանում գործը ստանալը տևել է 6 ամիս 14 օր, առաջին ատյանի դատարանում քննությունը տևել է 1 տարի 7 ամիս 9 օր (նշանակվել է 14 նիստ, 1 նիստ չի կայացել): Վերաքննիչ քրեական դատարանում գործի քննությունը տևել է 9 ամիս 20 օր (նշանակվել է 11 նիստ, 6-ը չի կայացել): Այսպես՝ քրեական գործի հարուցումից մինչև Վերաքննիչ քրեական դատարանում քննության ավարտը տևել է 4 տարի 11 օր: Եվս մեկ օրինակ՝ ԵԴ/0403/01/19 քրեական գործը հարուցվել է 08.11.2018թ.: Գործը դատարանում ընդունվել է վարույթ 18.06.2019թ.,դատավճիռը կայացվել է 25.06.2021թ.-ին: Այսինքն՝ քրեական գործի հարուցումից մինչև դատավճռի կայացումը տևել է 2 տարի 6 ամիս 17 օր:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (…) դատարանի կողմից ողջամիտ ժամկետում (…) դատաքննության իրավունք:

Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն՝ «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության»[4], քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը[5]:

Գործերը «ողջամիտ ժամկետում» քննելու պահանջի պայմաններում ՄԻԵԴ-ն ընդգծել է արդարադատության՝ առանց ձգձգումների իրականացման կարևորությունը, ինչը կարող է վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը: Չափազանց մեծ

[4] Տե՛ս Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications no. 2278/03 and 6222/03, 20/05/2010

[5] Տե՛ս 16 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1585 որոշումը

ծանրաբեռնվածությունը չի կարող հաշվի առնվել որպես արդարացում[6]: Ավելին, գործերի քննությունն արագացնելու համար նախատեսված բարեփոխումների ներդրումը չի կարող արդարացնել ձգձգումները, քանի որ պետությունները պարտավորվում են այնպես կազմակերպել նման միջոցների ուժի մեջ մտնելն ու կիրարկումը, որ հնարավոր լինի խուսափել քննության փուլում գտնվող գործերի քննությունը երկարաձգելուց[7]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որպես գործի քննության տևողության ողջամտության գնահատման չափանիշ առանձնացնում է հետևյալները. գործի բարդությունը, դիմումատուի և համապատասխան մարմինների դրսևորած վարքագիծը, վեճի առարկայի նշանակությունը դիմումատուի համար[8]:

Հայաստանյան դատական վիճակագրության տվյալներով[9], օրինակ, ՀՀ վարչական դատարանում գործերի քննության 2018թ. հաշվետվությամբ քննվել է ավելի, քան 21.000 գործ: Վարչական դատարանի յուրաքանչյուր դատավորի տարեկան միջին ծանրաբեռնվածությունը հետևյալն է՝ 2018 թվականին՝ 905 վարչական գործ:

Ըստ Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տարեկան հաղորդման[10],

- ՀՀ վարչական դատարանը գործում է առնվազն 24 դատավորի թվակազմով,
- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 62 դատավորի թվակազմով,
- Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 9 դատավորի թվակազմով,
- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ առնվազն 12 դատավորի թվակազմով,
- Վերաքննիչ քրեական դատարանը. գործում է առնվազն 18 դատավորի թվակազմով,

---

[6] Տես Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի [H. v France], գանգատ թիվ 10073/82, 24.10.1989թ., կետ 58, Կատե Կլինչ դե լա Գրանժն ընդդեմ Իտալիայի [Katte Klitsche de la Grange v Italy], գանգատ թիվ 12539/86, 27.10.1994թ., § 61, Վոկանտուրոն ընդդեմ Իտալիայի [Vocaturo v Italy], գանգատ թիվ 11891/85, 24.05.1991թ., § 17, Կապելլոն ընդդեմ Իտալիայի [Cappello v Italy], գանգատ թիվ 12783/87, 27.02.199թ., § 17:

[7] Ֆիսանոտին ընդդեմ Իտալիայի [Fisanotti v Italy], գանգատ թիվ 99/1997/883/1095, 23.04.1998թ., § 22:

[8] Cases of Comingersoll S.A. v. Portugal [GC], application no. 35382/97, 06/04/2000, Frydlender v. France [GC], application no. 30979/96, 27/06/2000, and Sürmeli v. Germany [GC], application no. 75529/01, 08/06/2006

[9] Տե՛ս հղմամբ https://court.am/hy/statistic-inner/186

[10] Տե՛ս հղմամբ՝ https://court.am/storage/uploads/files/news/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B2%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82%D5%B4-%D4%B2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6%20%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AD%D5%B8%D6%80%D5%B0%D5%B8%D6%82%D6%80%D5%A4_compressed-compressed-min%20(1).pdf

- Վերաքննիչ վարչական դատարանը. գործում է առնվազն 10 դատավորի թվակազմով,
- Վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ 6 դատավորի թվակազմով,
- քաղաքացիական և վարչական պալատը՝ 11 դատավորի թվակազմով, որոնք համար-վում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող:

ԲԴԽ 2019թ. տարեկան հաղորդման մեջ համեմատականներ են անցկացվել տարբեր պետություններում 100.000 բնակչին բաժին ընկնող դատավորների թվաքանակը, քննվող գործերի վիճակագրությունը և հանգել հետևության, որ ՀՀ դատավորների թվաքանակի նվազ է 100.000 բնակչին բաժին ընկնելու համեմատ: ՀՀ-ում յուրաքանչյուր 100.000 բնակչի համար դատավորների թվաքանակը կազմում է մոտ 8.3: Հաղորդմամբ արձանագրվել է նաև դատարաններում քննվող գործերի աճ:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրել ենք, որ թե՛ ՀՀ վարչական դատարանում՝ ընդդեմ քրեակատարողական համակարգի ներկայացված դատապարտյալների հայցերով, թե՛ Երևան քաղաքի, Շիրակի և Արմավիրի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում գործերի քննությունը պարբերաբար հետաձգվում է, նիստերի նշանակման պարբերականությունը բավականին խնդրահարույց է՝ հաճախ ողջամիտ ժամկետում քննության իրավունքին հակասող:

Covid-19-ը համավարակը՝ որպես դատաքննության ողջամիտ ժամկետի վրա ազդող գործոն

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները երաշխավորված են ՀՀ Սահմանդրության 61-րդ և 63-րդ հոդվածներով և ենթակա չեն սահմանափակման կամ կասեցման արտակարգ դրության ժամանակ: Մշտադիտարկման արդյունքներով նկատելի է, որ 2020թ. մարտից մինչ օրս հաճախակի հետաձգվող, չկայացող դատական նիստերը հետևանք են նաև COVID-19 համավարակի, որի օբյեկտիվ՝ ֆորս-մաժորային գործոնը անտեսել անհնար է, քանի որ COVID-19 համավարակի պատճառով դատավարության տարբեր մասնակիցների բացակայության հետևանքով դատական նիստերի հաճախակի հետաձգումների փաստեր ևս արձանագրվել են մշտադիտարկման արդյունքում: Օրինակ՝ թիվ ԵԴ/0670/01/21 քրեական գործը երկու անգամ չի կայացել /հետաձգվել է/ դատավարության մասնակցի հիվանդության պատճառով: Սակայն քրեական գործերով վարույթները ո՛չ նախաքննության փուլում, ո՛չ դատարանում չէին և չեն անցկացվում առցանց՝ ելնելով մարդու հիմնարար իրավունքների լիարժեք, անխոչընդոտ իրացման ապահովման պետության դրական պարտավորությունից: Թեև քաղաքացիական վարույթներում նման փոփոխություններ տեղի ունեցան նաև քաղաքացիական դատարաններում:

COVID-19 համավարակի պայմաններում բազմաթիվ պետություններ ստիպված էին, ի թիվս այլ ոլորտային գործիքակազմերի ներդրման[11], համապատասխանեցման, փոփոխություններ կատարել նաև դատական համակարգի գործունեության մեջ: Մի շարք պետություններ համավարակի տարածման նախնական փուլում փորձեցին հնարավորինս կրճատել դատական համակարգում գործերի քննության ընդհանուր քանակը՝ նախապատվություն տալով «հրատապ»[12] գործերով քննություններին: Միաժամանակ որոշներն էլ ձեռնամուխ եղան հեռավար՝ տեսակապի կիրառմամբ դատական գործերի քննությանը[13]:

Իրավական համագործակցության եվրոպական հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ հատկապես քաղաքացիական և վարչական դատավարություններում դատարանների կողմից էլեկտրոնային ապացույցների ավելի լայն օգտագործումը, այդ թվում՝ տեսախցիկների միջոցով վկաների ցուցմունք վերցնելը, կարող է օգնել հաղթահարել COVID-19 համավարակի հետ կապված սահմանափակումները[14]:

2020 թ. հոկտեմբերի 26-ին Բարձրագույն դատական խորհուրդը, հիմք ընդունելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 17-րդ հոդվածը, Կառավարության 2020 թ.-ի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշումը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասը՝ որոշեց Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում տեսաձայնային հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգի ներդրման միջոցով դատական նիստերի մեկնարկը հայտարարվելուն պես, դատավարության մասնակիցների համաձայնությամբ, դատական նիստերն իրականացնել հեռավար/առցանց՝ բոլոր հասանելի էլեկտրոնային հավելվածների կիրառման միջոցով:

Ու թեև քաղաքացիական որոշ գործերով հնարավոր դարձավ առցանց նիստերի անցկացումը, քանի որ քաղաքացիական դատավարության օրենսդրությունը տալիս էր նման ընթացակարգ կիրառելու թույլտվություն, այդուհանդերձ թե՛ հետաքննական ու նախաքննական մարմինները, թե՛ քրեական գործեր վարող դատարանները չանցան առցանց աշխատանքի:

---

[11] Տե՛ս հղմամբ https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2021/11/%D6%84%D5%B8%D5%BE%D5%AB%D5%A4-19_onlain.pdf
«COVID-19-ի ազդեցությունը կանանց իրավունքների վրա» հետազոտություն, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ

[12] Օրինակ՝ Խորվաթիայում, Կիպրոսում եւ Դանիայում, տե՛ս. "Coronavirus Pandemic in the EU -Fundamental Rights Implications: with a Focus on Contact-Tracing Apps", Fundamental Rights Agency, Bulletin No. 2, 21 մարտ - 30 ապրիլ, 2020, էջ 28

[13] Տե՛ս հղմամբ՝ https://www.osce.org/files/f/documents/5/5/469170.pdf

[14] Տե՛ս հղմամբ՝ https://www.osf.am/wp-content/uploads/2020/08/%D4%B1%D6%80%D5%A4%D5%A1%D6%80-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%84%D5%B6%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%AB-%D5%A5%D6%80%D5%A1%D5%B7%D5%AD%D5%AB%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-Covid-19-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B3%D5%A1%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B5%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%B8%D6%82%D5%B4.pdf

Պաճառներից մեկն այն էր, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախ նման ընթացակարգ նախատեսված չէ, բացի այդ, նման կերպով կվտանգվեին քրեական դատավարության իրավունքից բխող մեղադրյալի մի շարք իրավունքներ: Մասնավորապես՝ մարդու արդար դատաքննության իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից, որը սահմանված է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) արձանագրել է[15], որ տեսակապի և այլ միջոցների օգտագործումը հեռավար դատաքննություն անցկացնելու համար ինքնին չի խախտում ՄԻԵԿ-ը, այնուամենայնիվ, այդ կերպ իրականացվող գործի քննության ընթացքում ամբաստանյալը պետք է կարողանա առանց որեւէ տեխնիկական խոչընդոտների հասկանալ, թե ինչ է կատարվում դատարանի դահլիճում, լսել եւ տեսնել դատական նիստի այլ մասնակիցներին: Մեղադրյալը պետք է ունենա բավարար հնարավորություն պաշտպանի հետ կոնֆեդենցիալ հաղորդակցման իրավունքն իրացնելու համար, իրեղեն ապացույցների հետազոտմանը և բոլոր գործողություններին մասնակցելու բավարար հնարավորություն: Իսկ առցանց դատական նիստերի մասնակցությունը հնարավոր է լիարժեք չապահովի իրավունքի իրացման այդ պահանջները, սակայն պետությունը պետք է պատշաճ ջանասիրություն դրսևորի ապահովելու բոլոր դատավարական կողմերի իրավունքների իրացումը:

Բաժին 1

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց իրավունքների իրացումը դատարանում

ՄԱԿ-ի կողմից ընտանեկան բռնությունը սահմանվում է որպես «Գենդերային հիմքով կատարվող բռնության յուրաքանչյուր գործողություն, որը կանանց պատճառում կամ կարող է պատճառել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը՝ լինի հասարակական, թե անձնական կյանքում»[16]:

Հայաստանի Հանրապետությունը դեռևս 1993թ.-ին է միացել «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային» (CEDAW, հայերեն հապավումը՝ ԿՆԽՎԿ)՝ վավերացնելով այն[17]: 2006թ.-ին ստորագրվել ու վավերացվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը, (CEDAW Optional Protocol), իսկ 2007թ.-ին Կանանց

[15] «Yevdokimov and Others v. Russia» դատական գործը տե՛ս հղմամբ. https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%22Yevdokimov%20and%20Others%22],%22documentcollectionid2%22:[%22GRANDCHAMBER%22,%22CHAMBER%22],%22itemid%22:[%22001-160620%22]}

[28] «Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» ՄԱԿ-ի հռչակագիր, Գ.Ա. Բանաձև 48/104, ՄԱԿ-ի փաստաթուղթ. A/RES/48/104 (1993թ):

[17] Տե՛ս հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=60505

քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան: 2017-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքը: Այդուհանդերձ, ՀՀ-ում ընտանեկան բռնությունը քրեականացված չէ: ԸԲ դեպքերով քրեական գործեր հարուցվում են քրեական օրենսգրքի շրջանակներում, օրինակ, ծեծ, դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք պատճառել, դիտավորությամբ միջին մարմնական վնասվածք պատճառել, դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք պատճառել, սպանություն, առևանգում և այլն:

Միջազգային՝ ԵԽ փորձագետ Լորի Մանն, օրինակ, ՀՀ ներկայիս գործող քրեական օրենսգրքի վերաբերյալ գրել է. «Գործող քրեական օրենսգիրքը կարելի է բնութագրել որպես գենդերային առումով չեզոք: Ստամբուլի կոնվենցիայի[18] և ԿՆԽՎԿ-ի կողմից շոշափվող գենդերային հիմքով բռնության ձևերից շատերը բացակայում են, նաև կողմնակալության շարժառիթով կատարված հանցագործությունների հիմքերի ցանկից ակնհայտորեն բացակայում է գենդերային գործոնը: Կնոջ նկատմամբ բռնությունը ծանրացուցիչ հանգամանք է համարվում միայն, եթե կինը հղի է: Հետևաբար գործող քրեական օրենսգրքի նախագծով չեն սահմանվում գենդերային հիմքով պայմանավորված շարժառիթների հետագծման միջոցները, մասնավորապես՝ գենդերային գործոնով պայմանավորված սպանությունը, և ինքնասպանության դրդելու հիմքում հաճախ ընկած գենդերային հատկանիշով պայմանավորված շարժառիթներն ու դինամիկան»[19]:

Կանանց նկատմամբ բռնությունն ինքնին համարվում է կատարված արարքը ծանրացնող հանգամանք մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ. երբ արարքը կատարվում է ընտանիքի անդամի, զուգընկերոջ կողմից կամ այն սեռային/գենդերային խտրականության հիմքով է կատարվել, ապա կիրառվում են առավել խիստ պատասխանատվության միջոցներ: Նման կարգավորումներ են առկա Բելգիայի[20], Բուլղարիայի[21], Էստոնիայի[22], Ֆրանսիայի[23] և Իտալիայի[24] օրենսդրությամբ:

Առողջությանը հասցված վնասները ընտանեկան բռնության հետևանքով կատարված դեպքերով առավել հաճախ հանդիպող հանցատեսակներից են: ԵՄ անդամ բոլոր պետությունները բռնության տարբեր ձևերի դրսևորումները քրեականացրել են իրենց

---

[18] Լրիվ անվանումը՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի մասին» Կոնվենցիա

[19] Հայաստանի քրեական օրենսգրքի նախագծի վերանայման արդյունքում առաջարկվող փոփոխությունների քննարկումը: Պատրաստվել է Եվրոպայի խորհրդի փորձագետ՝ Լորի Մանի կողմից՝ 2019 թվականի հոկտեմբերին

[20] Տե՛ս հղմամբ՝ https://www.legislationline.org/download/id/8240/file/Belgium_CC_1867_am2018_fr.pdf

[21] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4152/file/PENAL_PROCEDURE_CODE_am2011_en.pdf

[22] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8244/file/Estonia_CC_am2019_en.pdf

[23] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8546/file/France_CC_am012020_fr.pdf

[24] Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4357/file/Italy_CPC_updated_till_2012_Part_1_it.pdf

ներպետական օրենսդրությամբ: Մեծ մասամբ քրեականացված հոդվածները, ի թիվս այլնի, տարածվում են նաև կանանց նկատմամբ կիրառվող բռնության նկատմամբ: Օրինակ՝ մարմնական վնասվածքներ հասցնելու հանցակազմն ինքնին կանանց նկատմամբ ֆիզիկական բռնության դրսևորման ձև է, սակայն այն կիրառվում է առհասարակ մարմնական վնասվածքներ հասցվելու բոլոր դեպքերում:

Ընտանեկան բռնության գործերում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետությանը պատասխանատու է համարում տուժողների պաշտպանության համար, մասնավորապես, երբ բռնության վտանգը հայտնի է եղել պետական համապատասխան մարմիններին կամ վերջիններս չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ տուժողներին պաշտպանելու համար («Բևացկուան ընդդեմ Բուլղարիայի», «Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի», «Հաջդուովան ընդդեմ Սլովակիայի)[25]:

Ընտանիքում բռնության զոհերը տուժողներ են, իսկ տուժողի իրավունքները պաշտպանվում են ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային կարգավորումներով, փաստաթղթերով երաշխավորում են տուժողների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Այսպես՝ քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի վիճակի մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1985 թ. հունիսի 28-ին ընդունված Հանձնարարականում (№ R (85) 11) անդամ պետությունների կառավարությունների ուշադրությունն է հրավիրվում այն հանգամանքի վրա, որ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինի հարցումների բավարարումն ու տուժողների շահերի պաշտպանությունը: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1985 թվականի նոյեմբերի 29-ին 40/34 բանաձևով ընդունել է «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը», որտեղ ամրագրված են հանցագործության զոհ դարձած անձանց շահերի պաշտպանության այն նվազագույն չափանիշները, որոնք պետք է ամրագրվեն ազգային օրենսդրության մեջ: Մասնավորապես, հանցագործությունից և իշխանության չարաշահումներից տուժած անձանց համար պետք է ապահովել՝ արդարադատության մատչելիություն և արդարացի վերաբերմունք:

Ըստ ՀՀ ոստիկանությունից ստացված տվյալների[26], 2020 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 246 դեպք, որը 6-ով ավելի է 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ: 58 դեպքով հարուցվել է քրեական գործ, որը 4-ով ավելի է 2019թ.-ի առաջին կիսամյակի համեմատ: Ընդ որում՝ 2020 առաջին 6 ամիսների կտրվածքով մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված քրեական գործերը (թվով 13) 62.5% ավելի է 2019թ. նույն ժամանակահատվածի համեմատ՝ (թվով 8 քրեական գործ):

[25] Ուղեցույց ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի վերաբերյալ Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք: Մարդու իրավունքների եվրոպական դատարան 2/160 Թարմացում՝ 31 դեկտեմբերի 2017թ
[26] Տե՛ս հղմամբ՝ https://www.prosecutor.am/am/mo/7898/

«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն[27] 2020թ. ապրիլ ամսին ունեցել է 79 առաջնային զանգ, որը 50%-ով ավելի է, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ստացված զանգերի ընդհանուր թիվը: Սակայն կարևոր է արձանագրել, որ զանգերի շուրջ 50%-ը վերաբերում են ընտանեկան բռնության ենթարկված անձանց կողմից սոցիալական աջակցություն ստանալու հնարավորություններին: ՀԿ վիճակագրության համաձայն, եթե շահառուների բողոքների հիման վրա 2018թ.-ին հարուցվել է 17 քրեական գործ, 2019թ.-ին՝ 32 քրեական գործ, ապա 2020թ.-ին ընտանեկան բռնության մասին «Կանանց աջակցման կենտրոնի» շահառուների ահազանգերով, նախապատրաստած նյութերի հիման վրա հարուցվել է 43 քրեական գործ: Եթե 2019թ.-ին ՀԿ-ի թեժ գծի ահազանգերի թիվը եղել է 716, ապա 2020թ.-ին թեժ գծի ահազանգերի թիվը ավելացել է՝ հասնելով 893, իսկ միայն 2021թ.-ի առաջին կիսամյակին թեժ գծի ահազանգերի թիվը հատել է 392-ի սահմանը: Ավելացել է նաև Կենտրոնի Ապահով տանը ապաստանածների թիվը: Եթե 2019-ին «Կանանց աջակցման կենտրոնի» կողմից ապաստան է տրամադրվել 40 կնոջ և 56 երեխայի, ապա 2020-ին՝ 73 կին, 101 երեխա է ապաստանել ՀԿ-ի Ապահով տներում:

ԸԲ դեպքերով քրեական գործերի մշտադիտարկման արդյունքները[28]

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվել է ԸԲ դեպքերով 174 քրեական գործ**:** Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, ինչպես նաև Արմավիրի և Շիրակի մարզերի ընդհանուր իրավասության դատարանների կողմից քննված և/կամ քննվող:

[27] Տե՛ս հղմամբ https://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2021/11/%D6%84%D5%B8%D5%BE%D5%AB%D5%A4-19_onlain.pdf

[28] Մանրամասն տե՛ս կից Հավելված 1-ում, Հավելված 2-ում, Հավելված 3-ում



Երևան քաղաք: ԸԲ դեպքերով ուսումնասիրված 174 քրեական գործերից 92-ը քննվել և/կամ քննվում են Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում:

92 քրեական գործերից՝

✓68-ը ավարտված գործեր են

✓24-ը անավարտ գործեր են:

Ավարտված գործերով վիճակագրությունը՝ գործերի ելքի, գործերի քննության ժամկետների, քրեական օրենսգրքով նախատեսված հոդվածների վերաբերյալ մանրամասն ներկայացված է Հավելված 1-ում:

Շիրակի մարզ: Ուսումնասիրված 159 գործերից 32-ը քննվել են Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

32 քրեական գործերից՝

✓18 -ը ավարտված գործեր են

✓14 -ը անավարտ գործեր են:

Ավարտված գործերով վիճակագրությունը՝ գործերի ելքի, գործերի քննության ժամկետների, քրեական օրենսգրքով նախատեսված հոդվածների վերաբերյալ մանրամասն ներկայացված է Հավելված 2-ում:

Արմավիրի մարզ: Ուսումնասիրված 174 գործերից 50-ը քննվել և/կամ դեռ քննվում են են Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում:

50 քրեական գործերից՝

✓34 -ը ավարտված գործեր են

✓16 -ը անավարտ գործեր են:

Ավարտված գործերով վիճակագրությունը՝ գործերի ելքի, գործերի քննության ժամկետների, քրեական օրենսգրքով նախատեսված հոդվածների վերաբերյալ մանրամասն ներկայացված է Հավելված 3-ում:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները

Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ: Մշտադիտարկման արդյունքներով ԸԲ դեպքերով ամենատարածված դրսևորումներից մեկը ֆիզիկական բռնությունն է, որը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի «Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ» գլուխ 16-ի հիմնականում հետևյալ հոդվածներով՝

- 118՝ ծեծ,
- 117՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել,
- 113՝ դիտավորությամբ առողջությանը միջին վնաս պատճառել,
- 112՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել,
- 110՝ ինքնասպանության հասցնել,
- 104՝ սպանություն,
- 119՝ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեբանական ուժեղ տառապանք:
- 353.1՝ անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելը:

ԸԲ դեպքերով հաշտությունը դատարանում

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 8-րդ հոդվածներին, իր մի շարք որոշումներում ձևավորել է այն իրավական դիրքորոշումը, որ առանձին դեպքերում, մասնավորապես ընտանեկան բռնության գործերով պետություններն ունեն պոզիտիվ պարտականություն[29]՝ պատշաճ քննություն իրականացնելու, ընդհուպ մասնավոր հետապնդման գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու համար[30]:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված մշտադիտարկված 68 քրեական գործերի 20,6%-ը կարճվել է դատարանում տուժողի և մեղադրյալի հաշտության հիմքով: Հաշտությունների ուսումնասիրության անհրաժեշտություն առկա է յուրաքանչյուր դեպքով, քանի որ հաճախ ԸԲ ենթարկված կանայք ֆինանսական կախվածություն ունենալով ենթադրյալ բռնարարից ստիպված են իրավական հաշտության համաձայնվում, ինչը հնարավոր է չկանխարգելի բռնության պերմանենտության շղթան, այլ ընդհակառակը՝ պարբերականության, կրկնության հիմք դառնա: Այս առումով, կարևոր և կանխարգելիչ քայլ է 2018-ի հունվարի 31-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի լրացված 4-րդ մասը, համաձայն որի, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ ընտանիքում բռնության հանցագործության դեպքերում դատախազն իրավասու է հարուցելու քրեական գործ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում: Ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի առկայությունը գնահատելու նպատակով ստուգվում է բռնության ենթարկվածի նյութական, նաև ոչ նյութական կախվածության հնարավոր դրսևորումների առկայությունը: Որպես անօգնական դիտարկվում է յուրաքանչյուր այնպիսի վիճակ, որի պարագայում ենթադրյալ բռնության ենթարկվածը զրկված է իր իրավաչափ շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից: Այն դեպքում, երբ ստուգման արդյունքում պարզվում է բռնության ենթարկվածի՝ անօգնական վիճակում գտնվելու կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստը, դատախազի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված իր լիազորությունը պետք է գործադրի պարտադիր, այլ ոչ թե հայեցողաբար: Մեր կենտրոնի

[29] «Օրինականացնելով գենդերային կարծրատիպերը՝ ՀՀ դատական համակարգն ու գենդերային խտրականությունը գենդերային հիմքով ընտանեկան բռնությունների գործերը քննելիս» զեկույց

[30] Օրինակ՝ Բեվաքուան և Ս-ն ընդդեմ Բուլղարիայի (2008թ. հունիսի 12-ի որոշում), Օփուզն ընդդեմ Թուրքիայի (2009թ. հունիսի 9-ի որոշում), Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի (2007թ. մայիսի 31-ի վճիռ) գործերով վճիռները:

պրակտիկայում եղել է նման դեպք մեր փաստաբանի բողոքը բավարարվել է, և հարուցվել է քրեական գործ հենց այդ օրենքի դրույթների համապատասխան[31]:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության 2020թ. տեղեկատվության, ընտանիքում բռնության մասնավոր մեղադրանքի 11 դեպքով, բողոքի բացակայության պայմաններում, դատախազի որոշմամբ, հարուցվել է նույնքան քրեական գործ: Ընտանիքում բռնության դեպքերի առթիվ քրեական գործերի 20%-ը հարուցվել են դատախազի կողմից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի լիազորության իրացման արդյունքում[32]:

2022թ.-ի հուլիսի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ևս, եթե նույն անձին վերագրվող արարքների մի մասը ենթակա է քրեական հետապնդման հանրային կարգով, իսկ մյուս մասը՝ մասնավոր կարգով, ապա քրեական հետապնդումն իրականացվում է հանրային կարգով: Իսկ 4-րդ մասով սահմանված է՝ անկախ քրեական հայց ներկայացնելուց կամ քրեական հայցից հրաժարվելուց՝ դատախազն իրավասու է քրեական հետապնդում իրականացնելու հանրային կարգով՝

1) ընտանիքում բռնության հատկանիշներով հանցանքներով:

Մեղմ պատիժներ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերը վկայում են այն մասին, որ տուգանքները խոչընդոտող գործոններ չեն ընտանիքում բռնություն գործադրած անձանց համար, և դրանք սովորաբար վճարվում են ընտանեկան բյուջեից, ինչը բռնության փաստի մասին բարձրաձայնելու բացասական խթան է կանանց, հատկապես տնտեսապես խոցելի ընտանիքների կանանց համար[33]:

Մշտադիտարկման արդյունքներով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված 68 քրեական գործերից

- 25-ով նշանակվել է տուգանքը որպես պատժատեսակ,
- 11-ով պատիժը պայմանականորեն չի կիրառվել,
- 2-ով ազատազրկում,
- 1-ով կալանքը որպես պատժատեսակ:

Նմանատիպ պատկեր է արձանագրվել նաև Արմավիրի և Շիրակի մարզերում:

[31] «Կանանց աջակցման կենտրոնի» շահառուներից Հ.Ս.-ի գործով
[32] Տե՛ս հղմամբ https://www.prosecutor.am/am/mo/7898/
[33] Օրինակ՝ Ա.Տ.-ն ընդդեմ Հունգարիայի գործը, որտեղ կատարողը տուժողին լուրջ մարմնական վնաս հասցնելու երկու դեպքերի համար տուգանվել էր 365 ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

Քրեական արդարադատության աքսեոմներից է հետևյալ սկզբունքը՝ ոչ թե խիստ պատիժներն են կանխարգելում հետագա հանցանքները, այլ՝ պատասխանատվության անխուսափելիությունը: Իսկ պատասխանատվությունը կարող է ոչ մեծ ու միջին հանցանքների պարագայում առավել արդյունավետ լինել պատիժների այլընտրանքային ձևերի կիրառմամբ: Օրինակ՝ հանրային աշխատանքների համակարգի զարգացումը, Պրոբացիայի ծառայության ներգրավումը, արժանապատիվ վարձատրությունը, հանրային բարիք ստեղծելը միաժամանակ կարող է կատարել և՛ կանխարգելիչ, և՛ վերասոցիալականացման ֆունկցիա ընտանիքում բռնության գործերով: Անձն այդպիսով կարող է գումար աշխատել, ստեղծել հանրային բարիք, որի որոշակի տոկոսը յուրաքանչյուր ամիս կփոխանցվի իր ընտանիքին: Զուգահեռաբար, անձը պարտավոր կլինի մասնակցել հատուկ ընտանիքում բռնության կանխարգելմանը նպաստող վերականգնողական ծրագրերի:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան[34]

ԸԲ դեպքերով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննված ու քննվող մշտադիտարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունը կազմում են ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծ) հանցակազմի հատկանիշներով գործերը: Այսպիսով՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված ու քննվող 92 քրեական գործից 40 քրեական գործ քննվում է ծեծի մեղադրանքով: Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված ու քննվող մշտադիտարկված գործերով երկրորդ առավել շատ արձանագրված հոդվածը քրեական օրենսգրքի 117 հոդվածն է՝ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը. 92 քրեական գործից 22-ը քննվել ու քննվում են քրեական օրենսգրքի 117 հոդվածով առաջադրված մեղադրանքի շրջանակներում:

Սակայն եթե ֆիզիկական բռնության դեպքերով գործերը ճնշող մեծամասնություն են կազմում, ապա նույնը չենք արձանագրել անձին հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու դեպքերով՝ քրեական օրենսգրքի 119 հոդվածի համաձայն: : Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված ու քննվող մշտադիտարկված 92 քրեական գործերից միայն 4 գործ է քննվել քրեական օրենսգրքի 119 հոդվածի հատկանիշներով:

ՀՀ Վճռաբեկ դատարանն Արևիկ և Ծովինար Սահակյանների վերաբերյալ որոշման[35] մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ առողջությունը մարդու օրգանիզմի այնպիսի ֆիզիոլոգիական վիճակն է, երբ դրա բոլոր համակարգերը, մասերը և օրգանները նորմալ գործում են: Առողջապահության

[34] Մշտադիտարկման արդյունքները մանրամասն տե՛ս Հավելված 1-ում
[35] ՀՀ Վճռաբեկ դատարանի 01.11.2012 թվականի ԱՐԴ/0176/01/11 որոշում

համաշխարհային կազմակերպության կանոնադրության նախաբանում առողջությունը բնորոշվում է որպես «ֆիզիկական, հոգևոր և սոցիալական լրիվ բարօրության վիճակ և ոչ թե միայն հիվանդությունների կամ ֆիզիկական արատների բացակայություն»:

Առողջության դեմ ուղղված ոտնձգության հետևանքով վնաս է պատճառվում անձի առողջությանը, խախտվում են անձի ինչպես ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ նրա առողջության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունները: Քրեաիրավական պաշտպանության օբյեկտի տեսանկյունից առողջությունը ոչ նյութական բարիք է, որը, ընդհանուր կանոնի համաձայն, բնորոշվում է որպես մարդու ֆիզիկական և հոգեկան բարօրության վիճակ:

Մշտադիտարկման արդյունքներով, 92 ավարտված գործերից միայն մեկն է սպանության հանցակազմով: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն (ԿՆԽՎԿ) իր եզրափակիչ դիտարկումներում Հայաստանին առաջարկել է հատուկ քրեականացնել կնասպանությունը: Դիտարկումներում նշված է. «Անհապաղ հարկավոր է համապարփակ օրենք ընդունել, որով հատուկ կքրեականացվի կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը, այդ թվում՝ կնասպանությունը և ամուսնական բռնաբարությունը»: Նույն մոտեցումը համահունչ է Կոմիտեի թիվ 19 ընդհանուր առաջարկությանը և նախորդ առաջարկություններին, որոնցում որդեգրվել է տուժածներին աջակցելու մոտեցում և որոնցում կիրառվում են քաղաքացիական և քրեական պաշտպանության միջոցներ[36]:

Ինչպես նշվել է Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի /ԺՀՄԻԳ-ի/ կողմից, կողմնակալության շարժառիթով կատարված հանցագործությունները «ավելի ուժեղ ազդեցություն են ունենում զոհերի վրա, քան «սովորական» հանցագործությունները: Դրանք ուղերձ են բոլոր համայնքներին»[37]:

«Շատ երկրներում զուգընկերոջ կողմից կամ ընտանեկան հիմքով սպանությունը կանանց սպանության ամենամեծ պատճառն է, և որ այդ երկրների սպանության ցուցանիշներն ավելի մեծ հավանականությամբ բխում են բռնության այս տեսակից (ընտանեկան բռնությունից), քան կազմակերպված հանցավորության հետ կապված սպանության տեսակներից, որոնց տուժողներ անհամամասնորեն հանդիսանում են տղամարդիկ»[38]:

---

[13] ԿՆԽՎԿ, Եզրափակիչ դիտարկումներ, ԿՆԽՎԿ/ՀԱՅ/ԵԴ/5-6, 2016 թվական, 17 «ա» պարբերություն, որով հղում է կատարվում ԿՆԽՎԿ/ՀԱՅ/ԵԴ/4/ՓՈՓ.1, պարբ. 23:

[37] ԺՀՄԻԳ, «Ատելության շարժառիթներով կատարվող հանցագործությունների կանխումը և դրանց արձագանքումը». ԵԱՀԿ տարածաշրջանում գտնվող ՀԿ-ների համար ռեսուրսային ուղեցույց, 2010 թվական, էջ 9
[38] ՄԱԿ ԹՀԳ, Կանանց և աղջիկների գենդերային գործոնով պայմանավորված սպանությունը. հեռանկարային գործելակերպեր, մարտահրավերներ և գործնական առաջարկություններ, ՄԱԿ ԹՀԳ/ՀԿՔԱՀ/ՓԽ.8/2014/2, 2014, 4-րդ պարբերություն:

Գալով մշտադիտարկման արդյունքներին՝ արձանագրել ենք, որ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված 68 ավարտված գործերի վերլուծության համաձայն, մեկ գործով դատաքննության միջին տևողությունը կազմում է 5 ամիս, մեկ գործով միջինը նշանակվում է 13 նիստ, նշանակված նիստերի 8% չեն կայացվել, դատական նիստերը նշանակվում են միջինը 1,5 ամիսը մեկ անգամ հաճախականությամբ: Քրեական գործերի 20,6%-ը կարճվել է դատարանում հաշտության հիմքով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ.ընտանեկան բռնության 68 ավարտված քրեական գործերով քննություն

Դատավոր	**Ուս. գործերի քանակ**	**Դատ.միջին տևողություն**	**Նիստերի ընդհանուր քանակ**	**Նիստերի նշանակման հաճախականություն**
Աննա Մաթևոսյան	9	2,6 ամիս	24 /չի կայացվել 3/	միջինը 1,5 ամիսը մեկ
Վարդան Գրիգորյան	8	9,3 ամիս	81 /չի կայացվել 24/	միջինը ամիսը մեկ
Դավիթ Բալայան	6	1,6 ամիս	26 /չի կայացվել 2/	միջինը 1,6 ամիսը մեկ
Արմինե Մելիքսեթյան	6	6,6 ամիս	23/չի կայացվել 8/	միջինը 1,6 ամիսը մեկ

Նելլի Բաղդասարյան	5	6,2 ամիս	33 նիստ /չի կայացվել 8/	միջինը 1,3 ամիսը մեկ
Կարեն Ֆարխոյան	5	4 ամիս	18	միջինը 1,6 ամիսը մեկ
Արմեն Վարդապետյան	3	5,6 ամիս	14	միջինը 2,16 ամիսը մեկ
Արտուշ Գաբրիելյան	4	3 ամիս	5	միջինը 2 ամիսը մեկ
8 դատավոր քննել է երկուական գործ	16	6,7 ամիս	88/չի կիայացվել 19/	միջինը 1,8 ամիսը մեկ
6 դատավոր քննել է մեկական գործ	6	6,3 ամիս	23 /չի կայացվել 2/	միջինը 1,15 ամիսը մեկ

Վիճակագրություն գործերի ելքի վերաբերյալ		
Դատավոր	**Ուս. գործերի քանակ**	**Գործի ելք**
Աննա Մաթևոսյան	9	2 գործով վարույթը կարճվել է հաշտության հիմքով 6 գործով տուգանք 1 գործով 3 ամբաստանյալի նկատմամբ ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել

Վարդան Գրիգորյան	8	2 գործով ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել 2 գործով տուգանք 3 գործով վարույթը կարճվել է հաշտության հիմքով 1 գործով կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց
Դավիթ Բալայան	6	3 գործով վարույթը կարճվել է հաշտության հիմքով 2 գործով տուգանք 1 գործով հետապնդումը դադարեցվել է վաղեմության հիմքով
Արմինե Մելիքսեթյան	6	3 գործով վարույթը կարճվել է՝ երկուսը հաշտության հիմքով/մյուս գործով հիմքը նշված չէ՝ ԵԴ/1047/01/19/ 3 գործով տուգանք
Նելլի Բաղդասարյան	5	2 գործով կարճվել է հաշտության հիմքով 1 գործով տուգանք 1 գործով 6 տարի ազատազրկում և 100.000 ՀՀ դրամ տուգանք

		1 գործով հայտարարվել է հետախուզում
Կարեն Ֆարխոյան	5	2 գործով վարույթը կարճվել է. մեկը հաշտության հիմքով /մյուսի հիմքը նշված չէ՝ ԵԴ/0265/01/21 / 3 գործով տուգանք
Արմեն Վարդապետյան	3	1 գործով կարճում հաշտության հիմքով 1 գործով տուգանք 1 գործով ազատազրկում 7 տարի
Արտուշ Գաբրիելյան	4	2 գործով ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել 1 գործով կարճվել է /հիմքը նշված չէ՝ ԵԴ/0658/01/21 / 1 գործով բշկական բնույթի հարկադրական միջոցներ
8 դատավոր քննել է երկուական գործ	16	2 ամբաստանյալի նկատմամբ կալանք 4-ի նկատմամբ տուգանք 4-ի նկատմամբ ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել 9 գործով կարճում հաշտության հիմքով

6 դատավոր քննել է մեկական գործ	6	2 գործով տուգանք 2 գործով ազատազրկումը պայմանականորեն չի կիրառվել 2 գործով կարճում հաշտության հիմքով

ԸԲ դեպքերով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում քննվող ու քննված

92 քրեական գործերով հոդվածները

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	104-րդ	110-րդ	112-րդ	113-րդ	117-րդ	118-րդ	119-րդ	131-րդ	137-րդ	141-րդ	185-րդ
Գործերի քանակը	1	2	5	1	22	40	4	2	5	4	5

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան[39]

Ինչպես Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի, այնպես էլ մշտադիտարկման աշխարհագրության մաս կազմող թե՛ Շիրակի, թե՛ Արմավիրի մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում ԸԲ դեպքերով քննված ու քննվող մշտադիտարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունը կազմում են ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծ) հանցակազմի հատկանիշներով գործերը: Այսպիսով՝ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված 18 ավարտված քրեական գործից 11 դեպքով քրեական գործ հարուցվել է միայն ծեծի մեղադրանքով:

Ավարտված 18 քրեական գործով մշտադիտարկման արդյունքների համաձայն, հետևությունը հետևյալն է՝ մեկ գործով դատաքննության միջին տևողությունը կազմել է 3,8 ամիս, մեկ գործով միջինը նշանակվել է 4 նիստ, նշանակված նիստերի 14% չի կայացել, դատական

[39] Մշտադիտարկման արդյունքները մանրամասն տե՛ս Հավելված 2-ում

նիստերը նշանակվել են միջինը 22 օրը մեկ անգամ: Ինչ վերաբերում է գործերի ելքին, ապա պատկերը հետևյալն է՝ 18 ավարտված գործից երկուսը կարճվել են դատարանում հաշտության հիմքով, 15 քրեական գործով կայացվել են մեղադրական դատավճիռներ՝ հիմնականում տուգանք պատժատեսակով, եղել են դեպքեր, երբ դատարանը նշանակել է ազատազրկումը որպես պատժատեսակ, սակայն այն պայմանականորեն չի կիրառել, այլ նշանակվել է փորձաշրջան:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. ընտանեկան բռնության դեպքերով 18 ավարտված գործերով քննություն

Վիճակագրություն գործերի ելքի վերաբերյալ		
Դատավոր	**Ուսումասիրված գործեր**	**Գործի ելք**
Աշոտ Մանուկյան	5	1.ազատազրկում 2 տարի. պայմանականորեն չի կիրառվել, 2.ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից. կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց, 3 և 4. տուգանք 50.000 ՀՀ դրամ հօգուտ պետ բյուջեի, 5. կալանք 20 օր
Ադրինե Ղուկասյան	2	1.ՀՀ վճռաբեկ դատարանը բեկանել և վաղեմության ժամկետով դադարեցրել է քր. հետապնդումը, 2. տուգանք 250.000 ՀՀ դրամ
Ջոն Հայրապետյան	4	1 և 2. ազատազրկում 1 տարի և 4 տարի, երկու գործով էլ պայմանական չի կիրառվել,

		3 և 4.քր. գործերի վարույթը կարճվել է հաշտության հիմքով
Էդգար Կարապետյան	1	Կարճում, կալանավորումը և դրա այլընտրանքային խափանման միջոց գրավը, վերացվել է
Վահե Միսակյան	1	տուգանք 50.000 ՀՀ դրամ
Նարեկ Բեգլարյան	5	1 և 2.ազատազրկում 1 տարի 6 ամիս և 6 ամիս, երկու գործով էլ պայմանականորեն չի կիրառվել, 3. կալանք 1 ամիս 4. պատիժը պայմանականորեն չի կիրառվել 5. տուգանք՝ 100.000 դրամ

18 գործով մեղադրական դատավճիռների վիճակագրություն

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	117-րդ	118-րդ	119-րդ	131-րդ	133-րդ	185-րդ
Դատապարտումների քանակը	1	11	1	3	2	1

Դատավոր	Ուս. գործերի քանակ	Դատաքննության միջին տևողություն	Դատական նիստերի ընդհանուր քանակ	Դատ.նիստերի նշանակման ժամանակացույց
Աշոտ Մանուկյան	5	2 ամիս 2 օր	20 (4-ը չի կայացվել)	միջինը 17 օրը մեկ
Ադրինե Ղուկասյան	2	8 ամիս 26 օր	7 (2-ը չի կայացվել)	միջինը 35 օրը մեկ
Ջոն Հայրապետյան	4	3 ամիս 24 օր	11 (2-ը չի կայացվել)	միջինը 26 օրը մեկ
Էդգար Կարապետյան	1	2 ամիս 22 օր	4	միջինը 10 օրը մեկ
Վահե Միսակյան	1	3 ամիս 8 օր	4 (1-ը չի կայացվել)	միջինը 23 օրը մեկ
Նարեկ Բեգլարյան	5	3 ամիս 8 օր	23	միջինը 20 օրը մեկ

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան[40]

ԸԲ դեպքերով Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից քննված ու քննվող մշտադիտարկված քրեական գործերի ճնշող մեծամասնությունը կազմում են ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածի (ծեծ) հանցակազմի հատկանիշներով գործերը: Այսպիսով՝ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. քննված ու քննվող 50 քրեական գործից 25 դեպքով քրեական գործ հարուցվել է միայն ծեծի մեղադրանքով:

Ավարտված 34 քրեական գործից 10-ի դեպքում քրեական գործերը կարճվել, հետապնդումը դադարեցվել է հաշտության հիմքով: Երկու գործով կայացվել է արդարացման դատավճիռ:

Ուսումնասիրելով ընտանեկան բռնություններին վերաբերող գործերի քննության տևողությունը, նկատելի է, որ ողջամիտ ժամկետում գործերը քննելու առումով խնդրահարույց է:

Օրինակ, թիվ ԱՐԴ/0039/01/19 քրեական գործով հրավիրվել է 12 նիստ (որից մեկը՝ դատավճռի հրապարակման նպատակով), որից կայացել է միայն 5-ը: Չկայացած 7 նիստերից 5-ով ամբաստանյալը չի ներկայացել դատարան, 2 նիստով դատարան չի եկել մեղադրողը:

Մեկ այլ՝ թիվ ԱՐԴ/0043/01/18 քրեական գործով հրավիրվել է 8 դատական նիստ, որից միմիայն մեկն է կայացել, այդ օրն էլ հրապարակվել է դատավճիռ՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով: Միայն 4 նիստ հետաձգվել է պաշտպանի, որից մեկը՝ ամբաստանյալի չներկայանալու պատճառով, 3 նիստով չի ներկայացել մեղադրողը:

Թիվ ԱՐԴ1/0018/01/20 քրեական գործով հրավիրված 8 նիստերից կայացել է միայն վերջին 2-ը, որից մեկը հրավիրվել է դատական ակտ հրապարակելու նպատակով: Նիստերից մեկը չի կայացել դատավորի՝ արձակուրդում գտնվելու պատճառով: Հաջորդ նիստը չի կայացել դատավորի ինքնամեկուսացման պատճառով: Դրան հաջորդող նիստը չի կայացել՝ մեկ այլ գործով դատավորի ծանրաբեռնվածության պատճառով: Հաջորդող երեք նիստերին չեն ներկայացել ամբաստանյալը, տուժողը, վկաները: Հետևանքն այն է, որ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությունը տևել է մոտ 1 տարի 2 ամիս: Գործը կարճվել է ամբաստանյալի մահվան հիմքով:

Ընտանեկան բռնությանը վերաբերող մեկ այլ՝ թիվ ԱՐԴ1/0049/01/17 գործի քննությունը դատարանում շարունակվում է արդեն 4 տարի 2 ամիս: 2017թ-ից մինչև 2020թ-ը գործը գտնվել է դատավոր Վահե Խալաթյանի վարույթում: Նրա լիազորությունները դադարեցվել են, և 27.10.2020թ. գործը մակագրվել է մեկ այլ դատավորի: Գործի քննությունը դեռ շարունակվում է: Սակայն 2020թ. հոկտեմբերի 27-ից սկսած 1 տարի 2 ամիս դատական նիստ

[40] Մշտադիտարկման արդյունքները մանրամասն տե՛ս Հավելված 3-ում

չի կայացել: Այդ ժամանակահատվածում հրավիրվել է 5 դատական նիստ՝ 2-3 ամիսը մեկ անգամ, որոնք հետաձգվել կամ չեն կայացել մեղադրյալի, մեղադրողի, պաշտպանի, տուժողի իրավահաջորդի, վկաների չներկայանալու պատճառով: Տվյալ գործով վերջին դատական նիստը հրավիրվել է 2021թ. նոյեմբերի 5-ին, հաջորդը նշանակվել է 2022թ. փետրվարի 10-ին՝ 3 ամիս անց:

Այսպիսով, դատական նիստերի մի մասը չեն կայացել, գործի քննությունը ձգձգվել է դատավարության կողմերի չներկայանալու պատճառաբանությամբ: Սակայն, գործը քննող դատավորները որևէ դեպքով բերման ենթարկելու որոշում չեն կայացրել: Այդ հանգամանքը կարող է դիտորդի մոտ կասկած առաջացնել ընտանեկան բռնություններին վերաբերյալ գործերը քննող դատավորների անաչառության վերաբերյալ:

Մշտադիտարկման արդյունքներով 34 ավարտված գործերից մեկ գործով դատաքննության միջին տևողությունը կազմում է 4,5 ամիս, մեկ գործով միջինը նշանակվում է 6 նիստ, նշանակված նիստերի 20,6% չեն կայացվել, դատական նիստերը նշանակվում են միջինը 22 օրը մեկ:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանում 2019-2021թթ. ընտանեկան բռնության 34* ավարտված գործերով քննություն

Մեկ գործի վերաբերյալ նշված ժամանակահատվածում դիմել են միայն Վճռաբեկ դատարան և տեղ չի գտել այս ցանկում

Վիճակագրություն գործերի ելքի վերաբերյալ		
Դատավոր	**Ուս. գործեր**	**Գործի ելք**
Վահե Խալաթյան		1. 3 գործով կարճվել է հաշտեցման հիմքով 2. 50 հազար դրամ, սակայն Վերաքննիչ դատարանը գործի վարույթը կարճել է՝ հաշտության հիմքով 3. Տուգանք 100 հազար դրամ 4. Տուգանք 100 հազար դրամ, սակայն Վերաքննիչ դատարանը կիրառել է համաներման ակտը և ազատել պատժից

	12	5. Տուգանք 350 հազար դրամ 6. Արդարացվել է, սակայն Վերաքննիչ դատարանը բեկանել և փոփոխել է, պատիժ նշանակել կալանք՝ 2/երկու/ ամիս ժամկետով: 7. ազատազրկում 2 տարի 8 ամիս 10 օր ժամկետով, սակայն Վերաքննիչ դատարանը վերաորակել է արարքը և գործի վարույթը կարճել՝ տուժողի հետ հաշտվելու հիմքով 8. ազատազրկում 3 տարի 5 ամիս 15 օր ժամկետով: 9. Ազատազրկում 10 տարի ժամկետով, սակայն Վերաքննիչ դատարանը վերաորակել է հոդվածը և պատիժ նշանակել 8 տարի ազատազրկում և 100 հազար դրամ տուգանք 10. Կիրառվել է համաներում
Արթուր Ադամյան	12	1. Տուգանք 30 հազար դրամ 2. Տուգանք 70 հազար դրամ 3. 2 գործով տուգանք 100 հազար դրամ 4. 4 գործով վարույթը կարճել՝ հաշտվելու հիմքով 5. 2 գործով Ազատազրկում 4 տարի ժամկետով, սակայն կիրառվել է համաներում և ազատվել պատժից 6. Կալանք 1 ամիս ժամկետով, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ նշանակվելով փորձաշրջան 1 տարի ժամկետով 7. Քրեական հետապնդումը դադարեցվել է մահվան հիմքով
Հրազյա Մեխակյան	2	1. վարույթը կարճել՝ հաշտվելու հիմքով 2. արդարացում՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ
Վահե Ջիվանյան	3	1. տուգանք 240 հազար դրամ 2. տուգանք 400 հազար դրամ 3. վարույթը կարճել՝ հաշտվելու հիմքով

Հրաչիկ Սարգսյան	4	1. տուգանք 100 հազար դրամ 2. տուգանք 400 հազար դրամ 3. արդարացվել է, սակայն Վերաքննիչ դատարանի որոշմամբ մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և պատիժ նշանակել՝ ազատազրկում՝ 8 (ութ) տարի ժամկետով, որին հաշվակցել Ռ.Մանուկյանի արգելանքի տակ գտնվելու ժամկետը՝ 1 (մեկ) տարի 2 (երկու) ամիս 27 (քսանյոթ) օրը և վերջնական պատիժ թողնել կրելու ազատազրկում՝ 6 (վեց) տարի 9 (ինը) ամիս 3 (երեք) օր ժամկետով՝ պատժի կրման սկիզբը հաշվելով նրան փաստացի արգելանքի վերցնելու պահից: 4. Կալանք 1 ամիս ժամկետով, սակայն պատիժը պայմանականորեն չի կիրառվել՝ նշանակվելով փորձաշրջան 1 տարի ժամկետով
Արմեն Հովհաննիսյան	1	1. Տուգանք 300 հազար դրամ

20 գործով մեղադրական դատավճիռների վիճակագրություն

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը	104-րդ 1-ին մաս	112-ի 1-ին մաս	113-ի 1-ին մաս	117-րդ	118-րդ	137-ի 1-ին մաս	147-ի 1-ին	173-րդի 1-ին մաս	258-ի 2-րդ մաս	353.1-ի 1-ին մաս
Դատապարտ. քանակը	1	3	1	1	6	1	1	1	1	5

Դատավոր	Ուս. գործերի քանակ	Դատաքննության միջին տևողություն	Դատ. նիստերի ընդհ. քանակ	Դատ.նիստերի նշանակման ժամանակացույց
Վահան Խալաթյան	12	4 ամիս	95, որից 4-ը չի կայացել	Մեկ ամիս
Արթուր Ադամյան	12	4 ամիս	57, որից 30-ը չի կայացել	Մեկ ամիս
Հրաչյա Մեխակյան	2	5 ամիս	9 նիստ, որից 1-ը չի կայացել	Մեկ ամիս
Վահե Ջիվանյան	3	6 ամիս	13 նիստ, որի 4-ը չի կայացել	Մեկ ու կես ամիս
Հրաչիկ Սարգսյան	4	5 ամիս	30 նիստ, որից 3-ը չի կայացել	17 օր
Արմեն Հովհաննիսյան	1	2 ամիս 22 օր	4 նիստ, որից 1-ը չի կայացել	17 օր

Հարցումներ ԸԲ ենթարկված կանանց հետ[41]

ԸԲ դեպքերով հարուցված քրեական գործերի մի մասը կարճվում է դեռևս նախաքննության փուլում՝ հաշտության և/կամ բողոքի բացակայության հիմքերով: Սակայն կարևոր է արձանագրել, թե ինչ խնդիրներ են առկա ԸԲ դեպքերով քրեական գործեր քննության ընթացքում դրանց՝ մինչև դատարան հասնելը, օրինակ, հետաքննության, նախաքննության փուլում: Հետևաբար, ով առավել, եթե ոչ բռնություն վերապրած անձինք, կարող են այդ մասին առաջին աղբյուրից տեղեկություն փոխանցել:

Այսպես՝ մշտադիտարկման շրջանակներում ԸԲ ենթարկված կանանց անանուն հարցումներ անցկացնելու նպատակով մշակվեց հարցաթերթիկ՝ հատուկ հարցադրումներով: Դրանք ներառում են հետաքննության մարմնի, նախաքննական մարմնի, դատարանների արձագանքը, գործողությունները, պետական պաշտոնյաների վերաբերմունքը բացահայտող հարցեր: Օրինակ՝

- ի՞նչն է Ձեզ կաշկանդել իրավապահ մարմինների աշխատանքում՝ պարբերաբար բացատրություն, ցուցմունք, առերեսում տալու համար կանչվելը,
- ի՞նչպես կգնահատեք քննիչի վերաբերմունքը՝ բարեհաճ, նորմալ, վատ, խտրական, համոզե՞լ են Ձեզ բողոքը հետ վերցնել, հաշտվել,
- քանի՞ անգամ եք հրավիրվել բացատրություն, ցուցմունք տալու,
- դատավորի վերաբերմունքը /խտրական, նորմալ, զոհակենտրոն,
- կանխարգելվե՞լ է ընտանեկան բռնությունը, եթե այո, ապա՝ ո՞ր մարմնի գործունեության շնորհիվ,
- և այլ հարցեր:

Հարցման[42] 16 մասնակիցները «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի նախկին ու ներկա շահառուներն են, որոնց բողոքների հիման վրա ոստիկանության բաժիններում հարուցվել են քրեական գործեր 2019-2021թթ.-ին:

Հարցման մասնակիցների մեծ մասը տարիներ շարունակ պարբերաբար ենթարկվել է ընտանեկան բռնության: Բռնության ամենաերկար ժամանակահատվածը համատեղ կյանքի 20 տարի է եղել:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ բռնության շղթան կանխվել է միայն բռնության միջավայրից իր հեռանալու միջոցով: Ինչ վերաբերում է գործերի քննության ողջամիտ ժամկետներին, ապա հարցման մասնակիցներից մեկի վերաբերյալ քրեական գործով նախաքննությունն, օրինակ, սկսվել է 2017թ.-ից և մինչ օրս շարունակվում է քննվել

[41] Հարցումներն անցկացվել են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի շահառուների հետ
[42] Հարցման արդյունքները մանրամասն տե՛ս Հավելված 4-ում

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում 4 տարի շարունակ: Սակայն այն գործերով, որոնցով առկա է հաշտություն, հիմնականում կարճվում են նախաքննության փուլում՝ չհասնելով դատարան:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը նշել է, որ բռնության շղթան կանխվել է միայն բռնության միջավայրից իր հեռանալու միջոցով: Հարցվածները պատասխանել են, որ նախկինում տեղեկացված չեն եղել, բայց այժմ տեղեկացված են, որ կան կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներ

Հարցման մասնակիցների մեծամասնությունը պատասխանել է, որ իրավապահ մարմինների աշխատանքում կաշկանդվել են պարբերաբար բացատրություն, ցուցմունք, առերեսում տալու համար ոստիկանություն կամ քննչական բաժին կանչվելը: Հարցման մասնակիցների մեծամասնությունը միջինը 4-5 անգամ հրավիրվել են ոստիկանություն կամ քննչական բաժին բացատրություն, ցուցմունք տալու նպատակով: Հարցման մասնակից կանայք նշել են, որ առերեսումները կատարվել են դեմ առ դեմ սկզբունքով: Ընդամենը 2 մասնակից է նշել, որ իր անվտանգությունն ապահովվել է առերեսման ժամանակ՝ հրավիրվել է ոստիկանության աշխատակից:

Հարցվածների ճնշող մեծամասնությունը տարիներ շարունակ չի դիմել ոստիկանություն, ըստ որոշ պատասխանների, մտածում էին փրկել ընտանիքը, մտածում էին, որ մի բան կփոխվի, ընտանիքը պահպանվի, «մտածում էի, որ տուգանքով ամեն բան կավարտվի, իսկ դա երեխաների խնամքի նույն գումարը պիտի լիներ»: Եվ միայն վերջում են նրանք դիմել իրավապահ մարմիններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 4

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ[43] անանուն հարցումների արդյունքները

- ✓ 16 հարցվածներից
  - 4 մասնակից է նշել միայն ֆիզիկական բռնության ենթարկվելու մասին:
  - 6 մասնակից նշել է ֆիզիկական և հոգեբանական բռնության առկայության մասին:
  - 3 մասնակից նշել է ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական բռնության մասին:
  - 3 մասնակից նշել է բռնության հոգեբանական, ֆիզիկական, սեռական, տնտեսական տեսակների մասին:
- ✓ 16 մասնակիցներից

[43] Հարցազրույցները կատարվել են «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ի շահառուների հետ

- 9-ը պատասխանել են իրենց և հարազատների կյանքի ու առողջության համար վախենալու պատճառով չեն դիմել ոստիկանություն:
- 1-ը չիմացության պատճառով:
- 1-ը մտածել է, որ չեն օգնի իրեն:
- 5-ն ունեցել են տարբեր պատճառներ ոստիկանություն չդիմելու համար՝ ամոթը, երեխաների շահը, ընտանիք չքանդելը, անիմաստ համարելը:

Հարցին, թե արդյոք բռնության ենթարկող անձը սպառնացել է, որ ոստիկանություն դիմելու դեպքում հաշվեհարդար կտեսնի

- ✓ 16 մասնակիցներից
  - 10-ը պատասխանել են՝ այո՛, ոստիկանություն դիմելու համար հաշվեհարդար տեսնելու սպառնալիք ստացել է:
  - 1-ը չի էլ խոսել ոստիկանություն դիմելու թեմայով ամուսնու հետ:
  - 3-ը պատասխանել են՝ ոչ, սպառնալիք չի եղել:
  - 2-ը պատասխանել են, որ կարծել են՝ ոստիկանները կնոջը չեն պաշտպանի, այլ՝ բռնություն կիրառող ամուսնուն: Մի կին այսպիսի սպառնալիք է ստացել՝ «կմորթեմ, կթաղեմ քեզ, միլիցեքը տեղդ էլ չեն իմանա»:

Հարցին, թե արդյոք բռնության ենթարկող անձը սպառնացել է, որ ոստիկանություն դիմելու դեպքում կինը երեխաներին չի տեսնի

- ✓ 16 մասնակիցներից
  - 6-ը դրական պատասխան են տվել:
  - 1-ը եղել է հղի վիճակում, երեխաներ չեն ունեցել:
  - 1-ը չի խոսել ոստիկանություն դիմելու մասին:
  - 2-ը համատեղ երեխաներ չեն ունեցել:
  - 6-ը բացասական պատասխան են տվել:

Հարցին, թե արդյոք բռնության ենթարկող անձը ոստիկանություն բողոքելու համար է՛լ ավելի է պատժել կնոջը

- ✓ 16 մասնակիցներից
  - 7-ը դրական պատասխան են տվել: Մեկը նշել է, թե ամուսինն ասել է՝ «գիտեիր միլիցա տալը պիտի մարսեի՞ր»:
  - 1-ը նշել է՝ եթե դիմեի, անպայման կպատժեր:
  - 1-ը տնից հեռացել է, նոր է դիմել ոստիկանություն հենց այդ պատճառով:
  - 1-ը նշել է, որ ցանկանում է պատժել:
  - 6-ը բացասական պատասխան են տվել:

Հարցին, թե արդյոք բռնության ենթարկող անձը սպառնացել է բողոքը հետ վերցնել՝ ասելով, որ երեխաներին չեք տեսնի այլևս

- ✓ 16 մասնակիցներից
    - 6-ը դրական պատասխան են տվել, սպառնալիքներ եղել են նաև հարազատների հասցեին, կնոջը մայրական իրավունքից զրկելուն ուղղված, գումարի դիմաց բողոքը հետ վերցնելու առաջարկ է նաև եղել, ամուսնու բարեկամներն են փորձել համոզել բողոքը հետ վերցնել:
    - 3-ը երեխաներ չունեն:
    - 7-ը բացասական պատասխան են տվել:

Հարցին, թե ինչպես կգնահատեն ոստիկանության արձագանքը, գործողությունները՝ արդյունավետ, օպերատիվ, միջին, վատ

- ➢ 16 մասնակիցներից
- 6-ը ոստիկանության արձագանքը, գործողությունները գնահատել են վատ:
- 5-ը՝ միջին:
- 3-ը արդյունավետ, այն էլ մեկը նշել է, որ մինչև իրավապահ մարմնի ներկայացուցչի ու ամուսնուն միջև հանդիպումն է արդյունավետ եղել ոստիկանության արձագանքը, դրանից հետո ամեն ինչ փոխվել է՝ ի օգուտ ամուսնու:
- 1-ը բողոքը նոր է ներկայացրել:

Հարցին, թե ինչպես կգնահատեն ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը՝ բարեհաճ, նորմալ, վատ, խտրական, համոզե՞լ են բողոքը հետ վերցնել, հաշտվել

- ➢ 16 մասնակիցներից
- 6-ը ոստիկանության աշխատակիցների վերաբերմունքը գնահատել են նորմալ:
- 4-ը՝ վատ:
- 1-՝ միջին
- 2-ը՝ բարեհաճ
- 3-ը՝ խտրական, նշել են, որ ոստիկանները համոզել են իրենց բողոքը հետ վերցնել, չներկայացնել, հաշտվել:

Հարցին, թե ինչպես կգնահատեն քննչական մարմնի արձագանքը, գործողությունները՝ արդյունավետ, միջին, վատ

- ➢ 16 մասնակիցներից
- 5-ը քննչական մարմնի արձագանքը, գործողությունները գնահատել են արդյունավետ:

- 5-ը՝ միջին:
- 2-ը՝ վատ:
- 1-ը դեռ արդյունքը չի տեսել:
- 3 գործ դեռ քննչական չի հասել:

Հարցին, թե ինչպես կգնահատեն քննիչի վերաբերմունքը՝ բարեհաճ, նորմալ, վատ, խտրական, համոզե՞լ է բողոքը հետ վերցնել, հաշտվել

➢ 16 մասնակիցներից
- 3-ը քննիչի վերաբերմունքը գնահատել են արդյունավետ:
- 5-ը՝ նորմալ:
- 2-ը՝ խտրական մոտեցման զգացողություն են ունեցել:
- 2-ը նշել են, որ քննիչը համոզել է բողոքը հետ վերցնել, հաշտվել:
- 1-ը նշել է՝ իրենց գործով տարբեր քննիչներ են զբաղվել տարբեր վերաբերմունք են ցույցաբերել:
- 3 գործ դեռ քննչական չի հասել:

Իրավապահներին դիմելը ողջամիտ ժամկետների առումով, ըստ հարցված կանանց մեծամասնության, անարդյունավետ է: Այսպես՝

➢ 16 մասնակիցներից
- 9-ը ողջամիտ ժամկետների առումով իրավապահ մարմիններին դիմելը անարդյունավետ է համարել:
- 3-ը՝ բավականին արդյունավետ են համարել:
- 1-ը շատ արդյունավետ:
- 3 գործ դեռ քննչական չի հասել:

Ինչ վերաբերում է դատական համակարգին, ապա՝
➢ 16 մասնակիցներից
- 4-ը դատավորի վերաբերմունքը նորմալ են գնահատել:
- 1-ը՝ խտրական վերաբերմունք է զգացել:
- 1 գործով քննությունը նոր է սկսվում:
- Մյուս գործերը հետաքննության և/կամ նախաքննության փուլում են կամ հաշտությամբ կարճվել են:

Եզրահանգում

- Մշտադիտարկման արդյուքներով, ընտանեկան բռնություններին վերաբերող քրեական գործերով գերակշռում են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծ)

հարուցված քրեական գործերը, այնինչ հոգեկան ուժեղ տառապանք եզրույթը, որը նախատեսված է քրեական օրենսգրքի 119 հոդվածով, իրավակիրառ նվազ պրակտիկա ունի, չնայած նրան, որ ընտանեկան բռնության դեպքերով հարցման մասնակից 16 կանայք բոլորն էլ նշել են, որ ենթարկվել են հոգեբանական բռնության:

- Մշտադիտարկման արդյուքներով, դատարաններում քրեական գործերը քննվում են միջինը 1,5-2 ամիսը մեկ նշանակվող նիստերով՝ հաճախ հանգեցնելով ողջամիտ ժամկետում գործերի քննության կողմերի իրավունքի ենթադրյալ խախտման:
- ԸԲ վերապրած կանանց հարցումների արդյունքներով, ողջամիտ ժամկետների առումով անարդունավետ է ԸԲ գործերով իրավապահներին դիմելը, բացի այդ, նրանք կաշկանդվում են պարբերաբար բացատրություն, ցուցմունք և/կամ առերեսման կանչվելիս:
- Մշտադիտարկման արդյունքներով, դատական նիստերը հիմնականում հետաձգվում են ամբաստանյալների, մեղադրողների նիստերին չներկայանալու, գործը քննող դատավորների արձակուրդում գտնվելու, այլ գործերով ծանրաբեռնված լինելու, դատական նիստերի օրերին արձակուրդ մեկնելու, այլ գործով խորհրդակցական սենյակում գտնվելու պատճառներով:
- Դատավորներն, ունենալով բավարար լիազորություններ, մշտադիտարկման արդյունքներով, հիմնականում սանկցիաներ չեն կիրառում ամբաստանյալների նկատմամբ, որոնց չներկայանալու պատճառով հետաձգվում են դատական նիստերը:
- Մշտադիտարկման արդյուքներով, ԸԲ դեպքերով քրեական գործերը շատ հաճախ ավարտվում են հաշտությամբ, սակայն հետագայում չի կատարվում դեպքերի մշտադիտարկում՝ արդյոք բռնության շղթան՝ պարբերականությունն այլևս չկա, թե տուժողը ստիպված է հաշտություն կնքել ինչ-ինչ պատճառներով, օրինակ՝ ֆինանսական կախվածության կամ երեխաներին չտեսնելու սպառնալիքի ներքո:
- Մշտադիտարկման արդյունքներով, ԸԲ դեպքերով հարուցված քրեական գործերով սահմանվում են մեղմ պատիժներ՝ տուգանքներ և/կամ պատիժը պայմանականորեն չի կիրառվում, արձանագրվել են նաև դեպքեր, երբ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով է քրեական գործը կարճվել դատարանում:

Առաջարկներ

1. Մշակել և ներդնել ինչպես ֆորս-մաժորային, այնպես էլ առօրյա իրավիճակներում օրենսդրական դատավարական ճկուն մեխանիզմներ՝ օրինակ, առցանց առերեսում, քննչական այլ գործողություններ իրականացնելու հնարավորություն, որոնք թույլ կտան զերծ պահել հատկապես ԸԲ ենթարկված կանանց կրկնակի զոհականացումից:

2. Մշակել ու ներդնել դատավարության մասնակիցների կողմից գործի նյութերին առցանց ծանոթանալու կարգն ու պայմանները:

3. Մշակել ու ներդնել առցանց դատական նիստերի կարգ բոլոր դատարաններում՝ նախատեսելով օրենսդրական անհրաժեշտ երաշխիքներ, այդ թվում՝ անձի ինքնությունը պարզելու, վկայի հարցաքննության դեպքում վերջինիս կողմից իր պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելու և պատասխանատվության մասին զգուշացված լինելու փաստաթուղթը ստորագրելու մեխանիզմներ, նիստի ընթացքում կոնֆիդենցիալության պահպանման պայմաններում փաստաբանի հետ հեռահաղորդակցվելու, անազատության մեջ գտնվող ամբաստանյալների դեպքում՝ ազատազրկման վայրերից դատական նիստերին մասնակցելու անխափան հնարավորություն:

4. Մշակել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183 հոդվածի 4-րդ մասի կատարման դատախազական վերահսկողության մշտադիտարկման կարգ, որպեսզի ԸԲ մասնավոր մեղադրանքի շրջանակներում քննված և հաշտությամբ ավարտված յուրաքանչյուր քրեական գործով դատախազը տուժողին լսելու պարտականություն ունենա:

5. ՀՀ քրեական օրենսգրքում մշակել օրենսդրական փոփոխություններ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ գլխում: Օրինակ, ԸԲ դեպքերով սահմանել ծանրացնող հիմքեր: Օրինակ, ընտանիքում պարբերական բնույթ ունեցող ծեծը, հղի վիճակում գտնվող կնոջ ծեծը որևէ կերպ տարբերակված չեն գործող քրեական օրենսգրքով: Եվ բոլոր դեպքերում անձը մեղադրական դատավճռի պարագայում վճարում է առավելագույնը 100.000 դրամ տուգանք:

Բաժին 2

Դատապարտյալների իրավունքների իրացումը հհ վարչական դատարանում

Մինչև 2019 թվականի հունվարի 22-ը դատապարտյալները պատժի կատարման ընթացքում առաջացած իրավական վեճերի լուծման նպատակով դիմում էին Ընդհանուր իրավասության դատարաններ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով[44]՝ առանց ժամկետային սահմանափակումների: Նման սահմանափակումներ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չեն: Սակայն 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշման[45] ընդունումից հետո քրեակատարողական համակարգ-դատապարտյալ իրավական վեճերի քննության առումով արմատական փոփոխություն տեղի ունեցավ: ՍԴՈ-

[44] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, գլուխ 49
[45] Տե՛ս 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումը

1439 որոշմամբ, քրեակատարողական համակարգ-դատապարտյալ իրավական վեճերի քննությունը վերապահվեց ՀՀ վարչական դատարանին, որտեղ կան դատավարական հստակ ժամկետներ և բոլորովին այլ գործիքակազմ:

ՍԴՈ-1439 որոշումից հետո երկար ժամանակ ստեղծվել էր մի իրավիճակ, որտեղ իրավական որոշակիությունը տեղի էր տվել, իրավունքների պաշտպանության տեսանկյունից դատապարտյալների համար անգամ կանխատեսելի ու որոշակի չէին իրենց գործողությունները: Նույնիսկ իրավաբան մասնագետները Սահմանադրական դատարանի վերը հիշատակված որոշումից հետո ամիսներ շարունակ չէին կարողանում կողմնորոշվել, թե որ դատարան պետք է դիմել դատապարտյալ- քրեակատարողական հիմնարկ (այսուհետ՝ ՔԿՀ) իրավական հարցերի դեպքում: Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ ՍԴ Որոշումն ինքնին հանգեցրել էր անհստակության, իրավական անորոշության, որը նախկինում գոյություն չուներ:

Վարչական հայցերը, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, ճիշտ ձևակերպելը իրավաբանական կրթություն չունեցող դատապարտյալների համար մեծագույն բարդություն է, եթե չասենք, որ անհնար է: Նրանք պետք է տարբերակեն հայցերի տեսակները, ժամկետները: Հետևանքն առհասարակ այն է, որ դատապարտյալի իրավունքի իրացումը, իրավական որոշակիությունը տուժում են, այսինքն՝ տուժում է քաղաքացին, կոնկրետ դեպքում՝ դատապարտյալը:

Մշտադիտարկման և պրակտիկ փաստաբանական գործունեության արդյունքում արձանագրում ենք, որ վարչական դատավարության գործիքակազմը բավականին մարդակենտրոն սկզբունքներ ու լուծումներ է առաջարկում դատապարտյալներին: Սակայն Վարչական դատարանի ծանրաբեռնվածության պատճառով գործերի քննությունը տևում է բավականին երկար, այն դեպքում, երբ այդ գործերի շրջանակներում շատ դեպքերում վճռվում է դատապարտյալների՝ առավել բարենպաստ պայմաններում պատիժ կրելու, նրանց վարքի վերաբերյալ առանցքային հարցեր, որոնք հաշվի են առնվում ազատություն վերադառնալու իրավական հարցերի քննության ժամանակ: Սակայն մշտադիտարկելով նաև ընդհանուր իրավասության դատարաններում գործերի քննության ժամկետները՝ արձանագրում ենք, որ Վարչական դատարանում և ընդհանուր իրավասության դատարաններում գրեթե աննշան սրբագրումներով դատական նիստերի նշանակման հաճախականությունը նույնական է: Մանավանդ, որ հաճախ Վարչական դատարանի կողմից հաշվի է առնվում այն հանգամանքը, որ հայցվորը դատապարտյալ է, հայցն առնչվում է մարդու հիմնարար իրավունքներին, ուստի Վարչական դատարանում ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն իրացնելով՝ դատապարտյալների գործերով նիստերը նշանակվում են առավել փոքր ընդմիջումներով:

Այնուամենայնիվ, Սահմանադրական դատարանը իրավական դիքորոշում է հայտնել այն մասին, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են պատժի կատարման հետ կապված միայն օրենքով նախատեսված գործերը, իսկ ՔԿ համակարգի պաշտոնյաների գործողությունների/անգործության, որոշումների՝ քրեական դատավարության օրենսգրքով բողոքարկման առանձին դրույթ գոյություն չունի: «(...) մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին»,- արձանագրված է ՍԴ որոշման մեջ:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1439 որոշման մեջ անդրադարձել է առկա համակարգային իրավական անորոշության հարցին և միայն ժամանակավորապես է ՀՀ վարչական դարտարանին վերապահել ՔԿՀ պետի որոշումների և գործողությունների դեմ գործերով քննություն իրականացնել: Հետևաբար, այդ համակարգային իրավական անորոշությունը, որն արդեն 3 տարի առկա է, լուծում է պահանջում:

Դատապարտյալների վարչական գործերով մշտադիտարկման արդյունքները

Մյուս խոցելի խումբը, որի իրավունքների իրացմանն անդրադարձել ենք, դատապարտյալներն են: Մշտադիտարկման շրջանակներում նույն սկզբունքով, ինչ առաջին բաժնի գործերը, ուսումնասիրվել է 2019թ.-ից ի վեր ՀՀ վարչական դատարանում քննված և/կամ քննվող 35 գործ[46], որոնցից

- 24-ը ավարտված գործեր են
- 9-ը՝ շարունակվող:

Մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրները

Առհասարակ քրեակատարողական հիմնարկներին և քրեակատարողական օրենսդրության վերաբերող նպատակներ կամ ուղղություններ շարադրված չեն Ռազմավարության մեջ: Դրանք զետեղված են Հայաստանի Հանրապետության քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության մեջ[47]: Այդուհանդերձ, դատաիրավական

[46] Արդյունքները մանրամասն տե՛ս Հավելված 5-ում
[47] Տես՛ հղմամբ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137161

բարեփոխումների ռազմավարության մեջ անդրադարձ է կատարվել դատապարտյալներին արդեն 3 տարի շարունակ հուզող խնդիրներից մեկին՝ որ դատարանում պետք է վիճարկեն քրեակատարողական հիմնարկների վարչակազմի որոշումները:

Այսպես՝ Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) որպես ռազմավարական ուղղություն նշված է՝ Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման վարույթի ենթակայության և գործի քննության ընթացակարգի հստակեցում: Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի հավելված 2-ում ներկայացված է հարցի լուծմանն ուղղված կոնկրետ գործողություն՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու միջոցով: Այդ գործողության իրագործումը վերապահված է ՀՀ արդարադատության նախարարությանը և Բարձրագույն դատական խորհրդին (համաձայնությամբ): Նույն ծրագրի հավելված 2-ում ընդգծված է, որ «Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը մնացել է չլուծված և դատական պրակտիկայում ստանում է իրարամերժ մեկնաբանություններ»: Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում նշված է[48], որ 2020թ. 2-րդ կիսամյակում «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը մշակված են և ներկայացվել են ՀՀ ԱԺ: Ակնկալվող արդյունքն այն պետք է լիներ, որ «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագծերը ներկայացվեին ՀՀ ԱԺ և դրանով կարգավորվեր քրեակատարողական հիմնարկի վարչակազմի որոշումների, գործողությունների և անգործության վիճարկման ընդդատության հարցը:

Սակայն մշտադիտարկման արդյունքում կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հիշյալ իրավահարաբերությունները կարգավորելուն միտված բարեփոխումների ծրագրով նախանշված օրենսդրական փոփոխությունները չեն ներկայացվել ԱԺ: Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում[49]՝ e-draft.am-ում, դեռևս 12.04.2019-ին՝ ՍԴՈ-1439 որոշումից ընդամենը 4 ամիս անց, տեղադրվել են «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը,

[48] Տե՛ս հղմամբ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487 Հավելված N 2, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշման նպատակ 13, գործողություն 2
[49] Տե՛ս հղմամբ https://www.e-draft.am/projects/1628

որոնք ուղղված են դատապարտյալ-ՔԿ համակարգ իրավական խնդիրների կանոնակարգմանը, դատական ընդդատությանը, սակայն դրանք այդպես էլ օրենքի ուժ չեն ստացել, այլ դեռևս գտնվում են լրամշակման փուլում: Ուշագրավն այն է, որ գրեթե նույնական ևս մեկ նախագիծ նույն հարթակում քննարկվել է դեռևս 01.11.2017-ին, սակայն նշված է, որ այն ևս լրամշակման փուլում է[50]:

[50] Տե՛ս հղմամբ https://www.e-draft.am/projects/512/about

ՀԱՎԵԼՎԱԾ 5

ՀՀ վարչական դատարանում դատապարտյալների 24 հայցերով 2019-2021թթ. քննությունը

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ			
ՎԵՃԻ ԱՌԱՐԿԱՆ	Դատ. նիստերի նշանակման միջին տևողությունը	Ուսումնասիրված գործերի քանակը	Դատաքննության միջին տևողությունը մինչև դատական ակտի կայացումը
Տույժերի վերաբերյալ գործեր	74 օրը մեկ	5	1 տարի 4 ամիս
Ռեժիմի փոփոխման գործերով	58 օրը մեկ	4	7-8 ամիս
Խրախուսանքների վերաբերյալ գործերով	100 օրը մեկ	4	13 ամիս
Համաներման վերաբերյալ գործերով	80 օրը մեկ	7	1 տարի
Այլ գործերով	67 օրը մեկ	4	1 տարի

Դատապարտյալների հայցերի քննությունը Վարչական դատարանում

Մեր ուսումնասիրությունը, իրավակիրառ պրակտիկան ցույց են տվել, որ ՀՀ վարչական դատարանի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործիքակազմը,

վարչարարության սկզբունքները բավականին մարդակենտրոն են, բխում են մարդու, քաղաքացու հիմնական իրավունքների իրացման անհրաժեշտությունից, բայցևայնպես վարչական դատարանը մասնագիտացված չէ քրեակատարողական իրավունքի ոլորտում, բացի այդ, ողջամիտ ժամկետում գործերի քննության առումով խնդիրներ են առաջանում, քանի որ հաճախ քննությունը տևում է չափազանց երկար: Այսպես՝ նախնական նիստը կարող է նշանակվել գործը վարույթ ընդունելուց հետո մի քանի ամիս անց, ինչը ազատությունից զրկված անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից չի կարող արդյունավետ լինել, մանավանդ, որ դատապարտյալների իրավական վեճերն այս կամ այն կերպ առնչվում են պատժից ազատման հիմքերին՝ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված խրախուսանքների, տույժերի, պահման ռեժիմների փոփոխության, բնութագրերի կազմման հարցերին: Դրանք հանգամանքներ են, որոնք հաշվի են առնվում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ժամանակ:

ՀՀ վարչական դատարան հայցվոր դատապարտյալների 2019-2021թթ. գործերի մշտադիտարկման արդյունքներով իրավական վեճերը հիմնականում առնչվում են հետևյալ հարցերին.

1. **մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ հատկապես՝ կիսաբաց և բաց քրեակատարողական հիմնարկներ տեղափոխելուն,**
2. **ՔԿՀ պետերի կողմից դատապարտյալների նկատմամբ տույժի միջոցներ կիրառելու, ինչպես նաև խրախուսելուն պարտավորեցնելուն,**
3. **դատապարտյալների վերաբերյալ կազմվող «Բնութագրեր»-ին,**
4. **համաներման հիմքով ազատմանը:**

Մեր կողմից ուսումնասիրվել է 2019-2021թթ. քննված ու դեռ ընթացքի մեջ գտնվող 35 վարչական գործ, որոնցով դատապարտյալները դիմել են ՀՀ վարչական դատարան ՍԴՈ-1439 որոշումից հետո: Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, արձանագրվել են դատապարտյալների իրավունքների իրացման ճանապարհին հանդիպող խոչընդոտները, ինչպես նաև տվյալ գործերի քննությունը ՀՀ վարչական դատարանի ընդդատությանն անցնելուն առնչվող թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը:

ՀՀ վարչական դատարանում, ինչպես մշտադիտարկման արդյունքներն են վկայում, հայցադիմումի մուտքագրման պահից մինչև որոշման կայացումը տևում է միջինը մեկ տարի և ավելի: Ուսումնասիրվել են գործեր, երբ շուրջ 1,6 տարի ՀՀ վարչական դատարանում գործի քննությունից և վճռի հրապարակումից հետո, վերաքննիչ բողոքը վարույթ է ընդունվել և նախնական դատական նիստ է նշանակվել մոտ 2 տարի հետո: Սակայն ազատազրկման մեջ գտնվող անձանց համար մի շարք գործեր ունեն կենսական նշանակություն՝ կապված են

ազատության, պատժի կրման պայմանների, առողջության պահպանման խնդիրների հետ, որոնց պարագայում ժամանակը կարևորագույն դեր է խաղում։

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացումը

Պրակտիկ աշխատանքը, գործերի մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ վարչական դատավարության գործիքակազմը, վարչարարության սկզբունքները մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից շատ արդյունավետ են, սակայն ողջամիտ ժամկետների առումով՝ խնդրահարույց, այն պարզ պատճառով, որ դատապարտված անձանց հայցերը հաճախ անմիջականորեն առնչվում է նրանց առողջության պահպանման, պահման ռեժիմների փոփոխության, ՔԿՀ վարչակազմերի գործողությունների՝ դատապարտյալների բնութագրման, խրախուսանքների և տույժերի բողոքարկմանը, որոնք ամեն դեպքում կապված են դատապարտյալների ազատություն վերադառնալու հարցերի հետ: Եվ այս խնդիրները, բնականաբար, պահանջում են օպերատիվություն, հրատապություն: Բայց վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ դժվար է դատապարտյալների հայցերի հետ կապված տարբերակված մոտեցում ցուցաբերել, քանի որ օրենսդրորեն նման դրույթ չկա: Հետևանքն այն է, որ դատապարտյալների՝ դեպի ազատություն վերադարձի հետ կապված առաջանում են ողջամիտ ժամկետներում իրենց գործի քննության իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ:

Մշտադիտարկված վարչական վարույթների վիճակագրությունը վկայում է, որ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից տույժերի վերաբերյալ որոշման վիճարկման գործերով դատաքննության միջին տևողությունը ՀՀ վարչական դատարանում կազմում է 14 ամիս, ՀՀ քրեակատարողական օրենսգրքով նախատեսված խրախուսանք տրամադրելուն պարտավորեցնելու վերաբերյալ վարչական բողոքների լսումները միջինը տևում են 13 ամիս, դատապարտյալների պահման ռեժիմների վերաբերյալ գործերը՝ 7-8 ամիս, համաներման գործերը՝ շուրջ 1 տարի: 2019թ.-ի ՍԴՈ-1439 որոշումից ի վեր ՀՀ վարչական դատարան մուտքագրված հիշյալ գործերի մի մասը դեռ ընթացքի մեջ են:

Արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացում

Գործերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՔԿՀ պետերի, ՔԿ ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի որոշումներում նշված չէ, թե դատապարտյալը տվյալ որոշումը կոնկրետ ո՞ր վերադաս մարմնում, ո՞ր դատարանում կարող է բողոքարկել, ինչպես նաև առկա չէ իրավական պարզաբանում, թե ինչ ժամկետներում այն կարող է բողոքարկվել: Ուստի, դատապարտյալների համար կանխատեսելի չեն իրենց հետագա գործողությունները: Բացի այդ, ՀՀ վարչական դատարան դիմելու համար անհրաժեշտ են մասնագիտական գիտելիքներ՝ ինչպիսի՞ հայցատեսակ

պետք է ներկայացվի, ի՞նչ պահանջներ է օրենսդրությամբ սահմանված հայցադիմումների համար։ Խնդրահարույց է՝ պետական տուրք վճարելու պարտականությունը։ Այսպիսով՝ ուսումնասիրված գործերի մշտադիտարկման արդյունքում ակնհայտ դարձավ, որ ազատազրկված անձինք առանց փաստաբանի՝ ներկայացուցչի օգնության չեն կարող լիարժեք իրացնել դատական պաշտպանության իրենց իրավունքը։

Հազվադեպ չէ այն իրավիճակը, երբ բաց են թողնվել այս կան այն որոշման, գործողության կամ անգործության բողոքարկման ժամկետները, և երբ դատապարտյալը գիտակցել է խնդիրը, նաև հնարավորություն ունեցել իրավաբանական մասնագիտական աջակցության, հայցադիմումներին կից ներկայացվել են բողոքարկման բաց թողնված ժամկետները վերականգնելու միջնորդություններ։ Հաճախ ՔԿՀ ներկայացուցիչները՝ որպես պատասխանող կողմ, առանձին վիճարկել են բաց թողնված ժամկետները վերականգնելու վերաբերյալ դատական միջանկյալ ակտերը, ինչը հավելյալ հետաձգել է գործի բովանդակային քննությունը։

Անկախ նրանից, որ ՍԴՈ-1439 որոշմամբ համապատասխան գործերի քննությունը վերապահվել է ՀՀ վարչական դատարանին և փաստացի գործերը վարույթ են ընդունվում, դատաքննություններ իրականացվում, պատասխանող կողմը դիրքորոշում է հայտնում, թե այսօրինակ վեճերի քննությունը դուրս է ՀՀ վարչական դատարանի ընդդատությունից, քանի որ ՔԿ համակարգը՝ ՔԿՀ-ները չեն հանդիսանում վարչական մարմիններ և վարչարարություն չեն իրականացնում։ Քրեակատարողական համակարգի դիրքորոշումն այն է, որ ՔԿ համակարգի պաշտոնյաների, վարչակազմի հարաբերությունները ազատազրկված անձանց հետ չեն հանդիսանում հանրային իրավահարաբերություններ, ուստի կիրառելի չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը։ Այս կարծիքը, նախ հակասում է ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմանը, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հոդված 3 մաս 1-ի համաձայն՝վարչական դատարան դիմելու իրավունք ունի յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝ ա) խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ) չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով։

Դատապարտյալների պահման ռեժիմների փոփոխության վերաբերյալ հայցեր

Մշտադիտարկված գործերի մի մասը վերաբերում է առավել ցածր մեկուսացվածության ՔԿՀ-ներ դատապարտյալների տեղափոխվելու վերաբերյալ հայցերին:

«ՀՀ քրեակատարողական ոլորտի և պրոբացիայի ոլորտի 2019-2023 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագրով» նախատեսված ՀՀ ԱՆ ՔԿԾ կենտրոնական մարմնում գործող Տեղաբաշխման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով կամ ՏՀ) գործունեության կարգի վերանայման միջոցառումը կատարվել է 2020թ. հուլիսի 10-ին: Այդպիսով՝ փոփոխվել ու լրացվել է ՀՀ ԱՆ 2012 թ.-ի մարտի 14-ի N 34-Ն հրամանը[51] (այսուհետ՝ Հրաման): Հանձնաժողովի գործունեության կարգը որոշակիորեն կանոնակարգելուն ուղղված հստակեցումներ անելով հանդերձ՝ կարգում հայեցողական լիազորությունների սահմանները կրկին մնում են շատ լայն, ինչը հանգեցնում է այն նույն չկանոնակարգված վիճակին, ինչը կար մինչև 2020թ. հուլիսի փոփոխությունները: Օրինակ՝ դարձյալ հստակեցված չեն Հանձնաժողովի լայն հայեցողական սահմանները՝ առավել ցածր մեկուսացվածության ՔԿՀ-ներ դատապարտյալի տեղափոխելու վերաբերյալ ՔԿՀ պետի միջնորդագրերի քննարկման ժամկետների առումով: Հստակեցված չէ, թե միջնորդագիրը ՔԿՀ-ից ստանալուց հետո Հանձնաժողովը կոնկրետ ինչ ժամկետում է պարտավոր քննարկել այն և համապատասխան որոշում կայացնել:

Հրամանի 12.2. կետով սահմանվել է, որ «Օրենքով սահմանված կարգով ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության համապատասխան որոշմամբ Հանձնաժողովի որոշման կասեցման դեպքում՝ Հանձնաժողովը վերանայում է իր որոշումը՝ այն թողնելով անփոփոխ կամ ճանաչելով անվավեր»: Որևէ կերպ ո՛չ Դատախազության մասին օրենքի 28 հոդվածով, ո՛չ սույն Հրամանով չի հստակեցվում այն ժամանակահատվածը, երբ Դատախազության համապատասխան ստորաբաժանումը կարող է օգտվել՝ իր չափազանց լայն հայեցողական լիազորությունից: Ավելին՝ սահմանված չէ, թե վերանայման կամ կասեցման պարագայում Տեղաբաշխման հանձնաժողովը ինչպիսի ժամկետներում պետք է վերանայի որոշումը: Դա է պատճառը, որ Դատախազության համապատասխան ստորաբաժանումը ՏՀ-ի որոշումը այսօր կարողանում է կասեցնել կամ վերանայման որոշում կայացնել անգամ երկու-երեք ամիս անց, և դա կատարվում է առանց դատապարտյալի լսելի լինելու իրավունքի իրացման: Այս ամենը հակասում է ՀՀ Սահմանադրության 50 հոդվածին, այսինքն՝ պատշաճ վարչարարության իրականացման սահմանադրական հիմնարար սկզբունքին, նաև որոշակիության, համաչափության, հայեցողական լիազորությունների չարաշահման արգելքի, կամայականության արգելքի սկզբունքներին: Բացի այդ, ըստ Դատախազության մասին օրենքի 28 հոդվածի 4-րդ մասի 3-

[51] Տե՛ս հղմամբ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=136714

րդ կետի, կասեցման որոշում դատախազը կարող է կայացնել, եթե իր կարծիքով հապաղումը կարող է բերել ծանր հետևանքների, որը ինքնին հակասահմանադրական դրույթ է, հակասում է որոշակիության ու համաչափության սկզբունքին: Այս չափազանց լայն հայեցողական լիազորությունների չարաշահման համար պարարտ հող հանդիսացող դրույթն ինքնին հանգեցնում է ծանր հետևանքների: Ուստի, անհրաժեշտ է, որպեսզի Հրամանով գոնե կանոնակարգվի նաև դատախազական վերահսկողության ժամկետների հարցը՝ առաջնորդվելով որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներով, արդյունավետ դատական պաշտպանության և արդացի ու ողջամիտ ժամկետում գործի քննության մարդու իրավունքներով:

Պետական տուրքի վերաբերյալ արձանագրված խնդիրներ

««ՀՀ պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը[52], որը ընդունվել է ԱԺ-ի կողմից 2021թ. ապրիլի 19-ին, դատապարտյալների իրավունքների իրացմանն առնչվող մի շարք հարցեր է պարունակում: Օրենքի հեղինակը՝ ՀՀ կառավարությունն՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի, «նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է համապատասխանեցնել Տուրքի դրույքաչափերը ներկայումս հաստատված սոցիալ-տնտեսական ցուցանիշներին: Կատարվող փոփոխություններով և լրացումներով ակնկալվում է բարձրացնել արդարադատության արդյունավետությունը: Միևնույն ժամանակ որպես հստակ նպատակ հետապնդվում է դատարան դիմելու մատչելիության սկզբունքը չխախտելը»,-նշված է Նախագծի հիմնավորման մեջ[53]:

Արդեն օրենքի ուժ ստացած ակտով էականորեն բարձրացվել է քաղաքացիական և վարչական դատարաններ դիմելու համար պետական տուրքի վճարման չափը, ինչը ծանր բեռ է ՀՀ վարչական դատարան պոտենցիալ դիմող դատապարտյալների մեծաքանակ խմբի համար, քանի որ 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումից հետո դատապարտյալների՝ պատժի իրականացման հետ կապված գործերը լսվում են հենց այդ դատարանում: Այժմ՝ «ՀՀ պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով է՛լ ավելի է վտանգվել դատապարտյալների՝ դատական արդյունավետ պաշտպանության իրավունքի իրացումը, երբ ՀՀ վարչական դատարան դիմելու համար անհրաժեշտ պետական տուրքն է ավելացել: Ավելին՝ Օրենքի 22-րդ հոդվածի փոփոխությամբ, ըստ որի պետական տուրքի վճարումից ազատվողների շրջանակն է թվարկված, դատապարտյալների խոցելի խմբի մասին հիշատակում չկա, այն

[52] Տե՛ս հղմամբ
[53] Տե՛ս հղմամբ՝ https://www.e-draft.am/projects/2576/justification

դեպքում, երբ ՀՀ ՔԿՀ-ներում աշխատանք չունեցող դատապարտյալները ճնշող մեծամասնություն են կազմում:

Մեջբերում ՀՀ վարչական դատարանի 25.06.2020թ. թիվ ՎԴ/2143/05/19 գործով որոշումից. ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ բողոքներով, բացառությամբ ճանապարհային ոստիկանության կողմից ընդունվածների: Նկատի ունենալով, որ Հայցվորի կողմից վիճարկվում են վարչական տույժ նշանակելու մասին որոշումները, որպիսի պայմաններում Հայցվորը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի «թ» կետի հիմքով ազատված է պետական տուրքի վճարումից, ուստի դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված»:

Այնուամենայնիվ, մեր կողմից ուսումնասիրված դատապարտյալների տույժերի վերաբերյալ գործերով պետական տուրքերը վճարվել են կամ վճարումը հետաձգվել է: Կան դեպքեր, երբ դատապարտյալները ազատվել են տուրքը վճարելու պարտականությունից՝ գույքային դրությունից ելնելով: Միայն վերը հիշատակված գործով է վկայակոչվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համապատասխան կետը, որի հիմքով, ստացվում է, որ տույժերի վիճարկումների վերաբերյալ բոլոր գործերով հայցվորները պետք է ազատվեին տուրքի վճարումից: Հետևաբար, հարկավոր է, որպեսզի դատավորները իրազեկվեն և դատապարտյալների՝ հիշյալ հայցերով չգանձվեն պետական տուրքերը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի համաձայն, «Պետական տուրքի չափի, դրա վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով»: Նշված օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետի համաձայն պետական տուրքի գծով արտոնությունների տեսակներն են, ի թիվս այլնի, պետական տուրքի վճարումից ազատելը: Իսկ նույն օրենքի 31-րդ հոդվածի «գ» կետի համաձայն, առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել դատարանները կամ դատավորները՝ սույն օրենքի 9-րդ հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից: Հաշվի առնելով, որ հայցվորները դատապարտյալներ են և, որպես կանոն, հիմնականում չունեն եկամուտ, առկա է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի «ա» կետով սահմանված արտոնությունը կիրառելու անհրաժեշտություն:

Եզրահանգում

• 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշման[54] ընդունումից հետո քրեակատարողական համակարգ-դատապարտյալ իրավական վեճերի քննության առումով արմատական փոփոխություն է տեղի ունեցել: ՍԴՈ-1439 որոշմամբ, քրեակատարողական համակարգ-դատապարտյալ իրավական վեճերի քննությունը վերապահվել է ՀՀ վարչական դատարանին, որտեղ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն, գործում են դատավարական հստակ ժամկետներ և գործիքակազմ:
• ՍԴՈ-1439 որոշումից հետո՝ 2019-ից ի վեր ՀՀ վարչական դատարանում ավելացել է դատապարտյալ հայցվորների թիվը:
• Քրեակատարողական համակարգ-դատապարտյալներ իրավահարաբերությունները հանրային իրավահարաբերություններ են:
• Որքան էլ մասնագիտացված Վարչական դատարանն աշխատում է գերծանրաբեռնված՝ այդուհանդերձ, մշտադիտարկման արդյունքները և իրավակիրառ պրակտիկան վկայում են, որ վարչական դատավարության օրենսդրությունը, գործիքակազմը՝ մարդու իրավունքների իրացման տեսանկյունից մարդակենտրոն սկզբունքներ ունեն, ուստի ՔԿ համակարգ-դատապարտյալ իրավական վեճերի լուծման համար Վարչական դատարանն արդյունավետ դատական պաշտպանության միջոց է:
• ՀՀ վարչական դատարանում գործերի քննության ժամկետները դատարանի գերծանրաբեռնվածության հետևանք են: Վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ դժվար է դատապարտյալների հայցերի հետ կապված տարբերակված մոտեցում ցուցաբերել, քանի որ օրենսդրորեն նման դրույթ չկա: Հետևանքն այն է, որ դատապարտյալների՝ դեպի ազատություն վերադարձի հետ կապված առաջանում են ողջամիտ ժամկետներում իրենց գործի քննության իրավունքի իրացման հետ կապված խնդիրներ:
• ՔԿ համակարգ-դատապարտյալ իրավահարաբերությունները կարգավորելուն միտված բարեփոխումների ծրագրով նախանշված օրենսդրական փոփոխությունները չեն ներկայացվել ԱԺ:
• «ՀՀ պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով է՛լ ավելի է վտանգվել դատապարտյալների՝ դատական արդյունավետ պաշտպանության իրավունքի իրացումը, երբ ՀՀ վարչական դատարան դիմելու համար անհրաժեշտ պետական տուրքն է ավելացել: Ավելին՝ Օրենքի 22-րդ հոդվածի փոփոխությամբ, ըստ որի պետական տուրքի վճարումից ազատվողների շրջանակն է թվարկված, դատապարտյալների խոցելի խմբի մասին հիշատակում չկա, այն դեպքում, երբ ՀՀ ՔԿՀ-ներում աշխատանք չունեցող դատապարտյալները ճնշող մեծամասնություն են կազմում:

[54] Տե՛ս 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշումը

• Դատապարտյալների տույժերի վերաբերյալ ուսումնասիրված գործերով պետական տուրքերը վճարվել են կամ վճարումը հետաձգվել է: Կան դեպքեր, երբ դատապարտյալները ազատվել են տուրքը վճարելու պարտականությունից՝ գույքային դրությունից ելնելով և հաշվի առնելով, որ դատապարտյալը չունի աշխատանք, հետևաբար՝ բավարար ֆինանսական միջոցներ:

Առաջարկներ

1. Առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել, որ ՔԿ համակարգի պաշտոնյաների գործողությունների/անգործության, որոշումների դեմ բողոքները, դիմումները քննվում են ՀՀ վարչական դատարանում:
2. Առաջարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանել ՔԿ համակարգի պաշտոնյաների գործողությունների/անգործության, որոշումների դեմ բողոքների, դիմումների քննության ողջամիտ ժամկետներ:
3. Առաջարկվում է ՀՀ ԱՆ 2012 թ.-ի մարտի 14-ի N 34-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարել՝ սահմանել կոնկրետ ժամկետ դատապարտյալին առավել ցածր մեկուսացվածության ՔԿՀ տեղափոխելու վերաբերյալ միջնորդագիրը ՔԿՀ պետի կողմից ներկայացնելուց հետո[55] ՔԿԾ տեղաբաշխման հանձնաժողովում քննության համար:

4. Առաջարկվում է սահմանել առավել ցածր մեկուսացվածության ՔԿՀ-ներ տեղափոխվելու համար անհրաժեշտ գնահատման միավորների սանդղակ, որը կանխատեսելի կդարձնի դատապարտյալների վարքագիծը[56]:

5. Առաջարկվում է կարգում ամրագրել դատապարտյալի մասնակցության իրավունքը ՏՀ նիստին[57]:

6. Առաջարկվում է ՀՀ ԱՆ 2012 թ.-ի մարտի 14-ի N 34-Ն հրամանում սահմանել կոնկրետ ժամկետներ Դատախազության համապատասխան ստորաբաժանման կողմից ՏՀ որոշումները վերանայելու կամ կասեցնելու, հետևաբար դրանից հետո ՏՀ-ի կողմից արդեն իսկ կայացված որոշումները վերանայելու համար: Օրինակ՝ ՏՀ-ի կողմից կայացված որոշման վերանայման կամ կասեցման համար 7-օրյա ժամկետ դատախազության համար, իսկ ՏՀ-ի համար այդ որոշումները վերանայելու նպատակով՝ 10-օրյա ժամկետ:

---

[55] ՀՀ Սահմանադրություն՝ 50-րդ հոդված «1. Պատշաճ վարչարարության իրավունքը. Յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:
[56] Այդպիսի կարգ՝ դարձյալ ԱՆ հրամանով գործում է պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի կիրառման նպատակով:
[57] ՀՀ Սահմանադրություն՝ 50-րդ հոդված «3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի»:

7. Առաջարկվում է համապատասխան փոփոխություն «Դատախազության մասին» օրենքի 28 հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետում, որով կհստակեցվի, թե որ դեպքերում դատախազի կողմից կարող է կասեցվել ՔԿ համակարգի պաշտոնյայի այս կամ այն որոշումը և ինչ կոնկրետ ժամկետում: Այժմ հիշատակված օրենքի դրույթը սահմանում է, կասեցման որոշում դատախազը կարող է կայացնել, եթե իր կարծիքով հապաղումը կարող է բերել ծանր հետևանքների, սակայն հստակ չէ, թե ինչ է նշանակում ծանր հետևանք: Բացի այդ, դատախազի կողմից ՔԿ համակարգի պաշտոնյայի որոշման կասեցումը պետք է չլինի զուտ դատախազի կարծիքով, ինչպես այժմ սահմանված է օրենքի այդ դրույթով: Որոշման կասեցումը պետք է բխի միմիայն վերաբերելի իրավանորմերի ու կոնկրետ գործի փաստական տվյալների համադրումից:
8. «ՀՀ պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 3 հոդվածում չաշխատող դատապարտյալների խոցելի խումբը ներառել պետական տուրքի վճարումից ազատվածների ցանկում:

Ամփոփում

ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշմամբ[58] հաստատված ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումները դեռ ընթացքի մեջ են: Ռազմավարության և Ծրագրի իրականացման երկամյա գործողությունների արդյունքում դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովմանը միտված շոշափելի փոփոխություններ չեն արձանագրվել մշտադիտարկման արդյունքների վերլուծությամբ: Այդուհանդերձ, լիահույս ենք, որ Ռազմավարության և Ծրագրի հաջորդ երկամյա գործողությունների արդյունքում 2021-2023թթ. դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանը և դատական քննության ողջամիտ ժամկետի ապահովմանն ուղղված քայլերը կնպաստեն գործնական դրական տեղաշարժերի:

«Խոցելի խմբեր. դատապարտյալներն ու ընտանեկան բռնության ենթարկված կանայք դատարաններում» մշտադիտարկման ծրագրով ընտրված հասարակության երկու խոցելի խմբի՝ դատապարտյալների և ընտանեկան բռնության ենթարկված կանանց գործերի քննության օրինակով վեր են հանվել դատարանների ծանրաբեռնվածության և դատական քննության ողջամիտ ժամկետի խնդիրներին վերաբերող մի շարք խնդիրներ:

Անշուշտ, դատական քննության ողջամիտ ժամկետների խնդրին առնչվող ֆորս-մաժորային գործոնը, որը առկա է ողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում՝ 2020թ.-ից ի վեր, չի կարելի անտեսել: Հետևաբար, առաջարկների մի մասն ուղղված է նման

[58] Տե՛ս հղմամբ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487

արտակարգ իրավիճակներում դատարանների գործունեության արդյունավետության բարձրացմանը: